Ազգ
Azg
11 ՅՈՒՆԻՍ 2013 ԵՐԵՔՇԱԲԹԻ 96(5179)
ISSN: 1829-1651

# Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպում են նախապատրաստում, թեեւ Ալիեւին ընտրություններ են սպասում

Հոկտեմբերի 16-ին Ադրբեջանում տեղի են ունենալու նախագահի ընտրություններ, որոնց մասնակցության հայտեր արդեն իսկ ներկայացված են, չնայած որպես հիմնական թեկնածուի ներկայիս նախագահ Ալիեւից բացի՝ որեւէ անձի անուն չի նշվում: Ամեն դեպքում, Ալիեւին են թերեւս հաղթող տեսնում նաեւ միջազգային հանրության որոշ ներկայացուցիչներ, քանի որ որոշ ծրագրերի իրականացումը ներկայումս Ալիեւի մասնակցությամբ ծրագրելը հենց դա է նշանակում:

Խոսքը, տվյալ դեպքում, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպմանն է վերաբերում, որպիսին կարծես թե կազմակերպվում է, եւ դա այն դեպքում, երբ Հայաստանում ընտրությունների ողջ շարին համարվեց «ոչ բարենպաստ» բանակցային գործընթացի շարունակականություն ապահովելու աշխատանքների համար: Բայց ստացվում է, որ Ադրբեջանում, դրսում էլ գիտեն, որ բան չի փոխվելու. բավականին կանխատեսելի երկիր է, Հայաստանին ոչ նման...

Ինչեւէ, Ադրբեջանի արտաքին գերատեսչության ղեկավար Էլմար Մամեդյարովը երեկ, ըստ «Թրենդ» գործակալության, հայտարարել է, որ հունիսի վերջին հանդիպելու է Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանին՝ «քննարկելու Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի հանդիպման նախապատրաստմանն առնչվող հարցեր»:

Մամեդյարովը նաեւ տեղեկացրել է, թե Վաշինգտոնից վերադարձին (նախորդ շաբաթ Վաշինգտոն ինչպես Մամեդյարովի, այնպես էլ Հայաստանի արտգործնախարար Նալբանդյանի այցերին «**Ազգը**» անդրադարձել է՝ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի հետ հանդիպումներից առաջ արված հայտարարությունների համատեքստում) Լոնդոնում հանդիպել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին ու քննարկել «Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների սպասվող հանդիպման օրակարգն ու ժամկետները»:

«Նախագահների հանդիպման նպատակը ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցերի քննարկումն է: Ես սպասում եմ Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի հետ հանդիպմանը, որպեսզի բազմակողմանի քննարկենք նախագահների հանդիպման նախապատրաստման հարցերը», ասել է Մամեդյարովը:

**Ա. Հ.**

# ԿԲ դրամավարկային քաղաքականությունից մինչեւ Դիլիջանի միջազգային դպրոց

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

## Ծառուկյանը խորհրդարանում



**Բոլոր դեպքերում երեւի ճիշտ էր Ազգային ժողովի նախագահը, որ մի քառօրյա առաջ հանձնարարեց նիստերի ընթացքում ներկա-բացակա անել պատգամավորներին եւ արդյունքները հրապարակել ԱԺ կայքում: Միգուցե դա էլ պատճառ է, որ ամենից շատ բացակայող պատգամավորներից ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանին հնարավոր է քառօրյայի առաջին օրը հանդիպել Ազգային ժողովում եւ անգամ ինչ-ինչ հարցերի պատասխան ստանալ նրանից:**

**Խորհրդարանում լրագրողների հետ կարճատեւ շփման ժամանակ Գորիսում տեղի ունեցածը Գ. Ծառուկյանը ցավալի գնահատեց, նշելով, որ լրագրողները մեկնաբանելիս պետք է զուսպ ու չափի մեջ լինեն, որովհետեւ կորուստ է եղել, եւ տեղի ունեցածը ոչ մի կողմի համար հաճելի չէ. «Համբերատար սպասենք՝ կան ներկաներ, տուժողներ, կա մահացած, համապատասխան իրավապահ մարմինները քննություն կկատարեն եւ մեղավորներին կպատժեն, իսկ նման դեպք այլեւս չպետք է կրկնվի», ասաց ԲՀԿ նախագահը:**

*Տես էջ 2*

# Ջավախքցին վճարում է Հայաստան մտնելու համար

Արդեն մի քանի օր ՀՀ մաքսային ծառայությունների որոշմամբ հայ-վրացական պետական սահմանի Բավրայի մաքսակետում Վրաստանի քաղաքացիների կողմից լրացվող բեռնամաքսային հայտարարագրերի տրամադրման համար մտցվել է բրոկերային միջնորդավճար, ինչը հարուցել է առանց այն էլ սոցիալական բազմաթիվ խնդիրներ ունեցող ջավախքցիների արդարացի դժգոհությունը: Այդ կապակցությամբ հունիսի 8-ի վաղ առավոտյան մի խումբ ջավախքցիներ բողոքի ակցիա էին կազմակերպել հայ-վրացական սահմանի վրա:

Հասկանալի է, որ բրոկերային միջնորդավճարը գանձվում է ըստ սահմանված կարգի եւ գործում է բոլոր սահմանային մաքսակետերում: Այս դեպքում խնդիրը բոլորովին այլ է, քանի որ Բավրայի սահմանակետից Հայաստան են մուտք գործում բացառապես մեր հայրենակիցները՝ ջավախքցիները, հետեւաբար, ստացվում է, որ մայր հայրենիք մուտք ու ելքի համար ջավախքցին գումար է վճարում, ինչը չի ընկալվում վերջիններիս կողմից եւ չի տեղավորվում առողջ տրամաբանության մեջ:

«Ջավախք» հայրենակցական միությունը այս կապակցությամբ իր խորը մտահոգությունն է հայտնում եւ կոչ անում ՀՀ մաքսային ծառայություններին լրջորեն քննարկել խնդիրը եւ վերականգնել նախկինում գործող կարգը: Մենք, միաժամանակ, հորդորում ենք ջավախքցիներին՝ հանդարտվել, զինվել համբերությամբ եւ լավատեսությամբ, այն ակնկալիքով, որ ընդունելի եւ գոհացուցիչ որոշում կընդունվի:

*«Ջավախք» հայրենակցական միության նախագահություն*

# Իլհամ Ալիեւն ինքնաառաջադրվել է գերտերությունների՞ համաձայնությամբ

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**Ինչպես հայտնի է, իշխող «Ենի Ազարբայջան» կուսակցության 5-րդ համագումարը նախագահի թեկնածու է առաջադրել Իլհամ Ալիեւին: Միաժամանակ, կուսակցության փոխնախագահի, այսինքն՝ Իլհամ Ալիեւի տեղակալի, պաշտոնում համագումարն ընտրել է Մեհրիբան Ալիեւային: Կուսակցության մի շարք առանցքային անդամներ, օրինակ՝ կրթության նախկին նախարար Միսիր Մարդանովը, տեղ չեն գտել կուսակցության ղեկավար մարմիններում:**

**Երրորդ ժամկետով Իլհամ Ալիեւի առաջադրման շուրջը առայժմ մեկ լրջագույն արձագանք կա. այսպես կոչված Ադրբեջանի ժողովրդավարական ուժերի ազգային խորհուրդը վերջապես հրապարակել է իր հռչակագիրը, որտեղ երեւույթը գնահատված է իբրեւ «ավտորիտարիզմից դեպի կատարյալ բռնապետություն անցնելու՝ վարչախմբի կողմից հասարակությանը նետված մարտահրավեր»:**

**Իրավիճակին արձագանքել է Իլհամ Ալիեւի աշխատակազմի ղեկավարի տեղակալ, արտաքին քաղաքական հարցերով պատասխանատու Նովրուզ Մամեդովը: Նրա խոսքերով՝ իշխանությունները «չեն կարող հասկանալ «միջազգային վարկանիշի» հարցի շահարկումը որոշ ուժերի կողմից, որով փորձ է արվում Ադրբեջանի վրա ճնշումներ գործադրել» (տես http://haqqin.az/news/6500):**

**Մամեդովի կարծիքով, եթե խոսքը վերաբերում է վարկանիշին, ապա «այդ տեսակետից այսօր եվրոպական շատ երկրներում իրավիճակը բավական բարդ է» (նույն տեղում): Ասվածից պե՞տք է հասկանալ, որ ադրբեջանցի պաշտոնյայի գնահատմամբ եվրոպական զարգացած երկրներում «նույնպես երրորդ ժամկետով նախագահ է ընտրվում»՝ հարցը մնում է առկախ: Սակայն նա ավելացրել է, որ «այդ տեսանկյունից որեւէ խնդիր չկա երրորդ ժամկետով հանրապետության ղեկավար առաջադրելու մեջ, եւ դա արդեն որոշված հարց է» (նույն տեղում):**

**Ադրբեջանցի պաշտոնյան, այսպիսով, նկատել է տվել, որ Իլհամ Ալիեւը երրորդ անգամ «կընտրվի» նախագահ՝ որքան էլ որ ներքին դժգոհություններ լինեն: Իսկ թե ինչո՞ւ է այդքան ինքնավստահ, Մամեդովը բացատրել է. «Այդ կապակցությամբ բոլոր երկրները, ամենամեծ պետությունների գլխավորությամբ, տվել են իրենց լիակատար համաձայնությունը» (նույն տեղում):**

**Նովրուզ Մամեդովի արած վերջին ընդգծումը չափազանց հետաքրքրական է: Բանն այն է, որ «Ենի Ազարբայջան»-ի համագումարում ելույթում Իլհամ Ալիեւը սեփական պաշտոնավարության 10-ամյակի հիմնական «նվաճումներից» մեկն էլ համարել է «ինքնուրույն եւ անկախ արտաքին քաղաքականությունը»: Նրա աշխատակազմի ղեկավարի տեղակալի ասածից, մինչդեռ, հասկացվում է, որ Իլհամ Ալիեւը երրորդ ժամկետով ինքնաառաջադրվելու հարցում հայցել է հատկապես «ամենամեծ պետությունների» համաձայնությունը:**

*Տես էջ 2*

# Խոսքը կարող է կյանք արժենալ, կամ զենքի մեջ դրված փամփուշտը նախատեսված է միայն թշնամու համար

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նոյեմբերյան, Տավուշի մարզ



«Շարքային Խլղաթյան, հյուր ունես», դիմեց զորամասի սպան զինվորին: Զինվորը, որ իր ծառայությունն էր կատարում, նախ շփոթվեց, հետո զարմացավ: Հյուրի չէր սպասում, հարազատներից չէին զգուշացրել, որ այցելելու են զորամաս: Ներս մտնող լրագրողի դեմքն էլ անծանոթ թվաց, ու զարմանքը կրկնապատկվեց: Շարքային Արման Խլղաթյանի մայրը, տեղեկանալով, որ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը մի խումբ լրագրողների հետ գնում է Նոյեմբերյանի զորամաս, ծանոթների միջոցով խնդրել էր, որ որդուն լուսանկարեինք եւ նկարներն ուղարկեինք իրեն, որ գոնե այդպես զինվոր որդու կարոտը կարողանար առնել: Մեր այս բացատրությունն ավելի շփոթեցրեց զինվորին: Հուզվեց ու աչքերը լցվեցին: Ուզո՞ւմ ես մամայիդ հետ զրուցել, հարցրեցի՝ առաջարկելով հեռախոսս: «Չէ, մերսի, համարյա ամեն օր զրուցում ենք, սպաներից հեռախոսը վերցնում խոսում ենք»: Կարճ զրույցից հետո սկսեցի նրան լուսանկարել: Յուրաքանչյուր կադրից հետո Արմանը կրկնում էր. «Փաստորեն իմ մաման ձեզ խնդրել է, որ գաք ինձ նկարեք, հա՞»:

Արման Խլղաթյանը քանդակագործ է: Նա ու եւս երկու նկարիչ տղաներ օրվա մեծ մասն անցկացնում են զորամասի ակումբում: Ներկեր, վրձիններ, մատիտներ, գիպս ու ջրաներկ՝ տղաների տրամադրության տակ են: Արմանն ու երկու ընկերները կարողանում են զորամասի փոքրիկ անկյունը լցնել ջերմությամբ, գույներով ու երեւակայությամբ: Սեղանին Արմանի հպարտությունն է՝ Անդրանիկի կիսանդրին. մենակ է քանդակել, աշխատանքը բարդ էր, մի քանի ամիս տանջվել է, սակայն արդյունքը սպասել չի տվել. կիսանդրին մասնակցել է մրցույթի եւ արժանացել մրցանակի: Սա Արմանի միակ ձեռքբերումը չէ բանակից: Ծառայության ընթացքում գտել է իսկական ընկերների. համոզված է՝ ընկերությունը ծառայության ավարտից հետո էլ կշարունակվի: Նորակոչիկներին խորհուրդ է տալիս՝ զորամաս մտնելուց մոռանալ այն բոլոր հասկացություններն ու վարվելակերպը, որ քաղաքացիական կյանքում «հարգված կամ ընդունված են»:

*Տես էջ 3*

# ԿԲ դրամավարկային քաղաքականությունից մինչեւ Դիլիջանի միջազգային դպրոց

1-ին էջից

Նա երեկ անդրադարձավ մամուլային այն հրապարակումներին, ըստ որոնց ինքն արգելում է ԲՀԿ-ականներին եւ հատկապես Նաիրա Զոհրաբյանին՝ սուր ելույթներ ունենալ ու քննադատել իշխանություններին: Ծառուկյանը հերքեց՝ ամեն ղեկավար իր թիմակիցներին պետք է հարգի, լսի ու նոր որոշումներ կայացնի, ո՞նց կարող է նման բան լինել: Իսկ Նաիրա Զոհրաբյանին էլ գովեց, թե կուզենար, որ նրա նման պատգամավորներ եւ երկրի նվիրյալներ շատ լինեին խորհրդարանում, նրա նման պայքարեին եւ մտածեին երկրի համար (եվրոպական կառույցներում հատկապես նրա աշխատանքը մասնանշեց):

ԲՀԿ-ականների համար արձակուրդային շրջան է սկսվել. ասաց, թե ԲՀԿ-ն պարտավորություններ ունի ժողովրդի առաջ, մինչեւ ժողովրդի խնդիրները չկարգավորվեն՝ ԲՀԿ պատասխանատուները արձակուրդ չեն գնա: Ծառուկյանը ԲՀԿ-ական պատգամավորներին հանձնարարել է շփվել ժողովրդի հետ եւ թեթեւացնել նրա խնդիրներ, մի խոսքով՝ աշխատում են, իսկ այդ նպատակով ԲՀԿ-ում ստեղծված աշխատանքային խումբը սեպտեմբեր-հոկտեմբերին հաշվետու կլինի:

### Գեներալական ժեստ

Ազգային ժողովի վերելակ նստելիս դեմառդեմ հանդիպեցի պատգամավոր գեներալներ Մանվել Գրիգորյանին եւ Սեյրան Սարոյանին, որոնք երկու կողմից էլ օգնականներով բոլորված՝ ակնհայտորեն ուզում էին վերելակ նստել: Միմյանց բարեւելուց հետո ասացի, թե պատրա՞ստ է գեներալներից մեկը վերելակ չնստել, քանի որ հազիվ երեք մարդ կարող է այնտեղ տեղավորվել (գեներալները սովորական մահկանացուներից բավական խոշոր են): «Կարեւորը Դուք եք, մենք ոտքով էլ կարող ենք իջնել», ի պատասխան ժպտալով ասաց **Մանվել Գրիգորյանը**, եւ իսկապես ուղղվեց դեպի աստիճանները՝ ոտքով իջնելու: Ուղեկիցները հետեւեցին նրան: Հետո էլ ասում են՝ մեր գեներալները կոշտուկոպիտ մարդիկ են:

### Բագրատյանին մերժում են

Երեկ Ազգային ժողովը քվեարկությամբ մերժեց Հրանտ Բագրատյանի այն նախագծի ընդգրկումն օրակարգ, որով առաջարկվում էր կարգավորել Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում աշխատող եւ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունները: Դեմ էին ՀՀԿ-ն եւ ՕԵԿ-ը, կողմ՝ բոլոր մնացած խմբակցությունները: Բագրատյանի հիմնավորումների մեջ էր նաեւ այն, որ այդպիսի օրենք ունենալը թույլ կտար ստվերային տնտեսությունը կրճատել:

### ԿԲ դրամավարկային ծրագիրը

Երեկ Ազգային ժողովում շարունակվում էր քննարկվել Կենտրոնական բանկի 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագիրը, որ դեռ սկսվել էր անցած քառօրյայում: ԿԲ նախագահ Արթուր Ջավադյանը պատասխանում էր պատգամավորների մտահոգություններին եւ սուր հարցերին: Երեկ ֆինանսների նոր նախարար **Դավիթ Սարգսյանը** այդ փաստաթղթի հարակից զեկուցողն էր, ով սպասվելիք տնտեսական աճի վերաբերյալ ԿԲ թվերից տարբեր թվային սպասելիքներ ներկայացրեց՝ կառավարության տնտեսական աճի վերաբերյալ սպասելիքները մեկ տոկոսով ավելի են ԿԲ սպասելիքներից (4,7-5,7 տոկոս): Ֆինանսավարկային եւ բյուջետային հանձնաժողովի նախագահ **Գագիկ Մինասյանն** էլ ԿԲ կանխատեսումները պահպանողական համարեց, քանի որ անկախ նրանից, որ գազի գնի թանկացմանբ գնաճը կարող է բարձր լինել, պետք է նաեւ ապահովել բարձր տնտեսական աճ:

Հետաքրքրական է, որ ԲՀԿ-ական **Միքայել Մելքումյանը** գազի գնի թանկացմամբ պայմանավորված գնաճը հաշվարկել էր 2,5 տոկոս, ՀՅԴ-ական **Արծվիկ Մինասյանը**՝ 2 տոկոս՝ գումարած էլեկտրաէներգիայի թանկացմանն հետեւանք 1 տոկոսից ավելի գնաճը, ինչի պատճառով երկուսն էլ գտնում են, որ տնտեսական աճը նվազ կլինի այս տարի:

Արտահերթ ելույթ ունեցած Ազգային ժողովի նախագահ **Հովիկ Աբրահամյանն** էլ ֆինանսների նախարարին եւ Կենտրոնական բանկի նախագահին կոչ արեց ստեղծված իրավիճակին համարժեք եւ պատասխանատու քայլեր անել՝ նշելով, որ երկրի տնտեսության զարգացման համար բոլորն են պատասխանատու: Նա ասում էր, որ տնտեսության զարգացման, արտագաղթի կասեցման համար կարեւոր է վարկառուներին ցածր տոկոսներով եւ երկարաժամկետ վարկերի տրամադրումը:

### Դիլիջանի միջազգային դպրոց

Երեկ քննարկվում էր վերնագրում նշված դպրոցին հարկային արտոնություններ տալու խնդիրը: Ֆինանսների փոխնախարար **Սուրեն Կարայանի** տեղեկացմամբ՝ Դիլիջանում նախատեսված միջազգային չափանիշներով այս դպրոցի կառուցման եւ շահագործման արժեքը 550 մլն դոլար է՝150 մլն դոլար կառուցումն եւ գույքի ձեռքբերումն է, 400 դոլար կարժենան գործառնական ծախսերն ու հետագա զարգացումը: Ծրագրին տրամադրվող հարկային եւ մաքսային արտոնությունների հետ կապված հղում էր արվում միջազգային չափանիշներով կրթահամալիրը տարածքային նշանակությանն ու նրա կառուցման եւ հետագա շահագործման ընթացքում աշխատատեղերի ստեղծմանը: Այս դպրոցում սովորելը վճարունակ աշակերտի համար կարժենա տարեկան երեսուն հազար դոլար, իսկ անվճարունակ, բայց տաղանդավոր երեխաների վճարները կմուծվեն հատուկ այդ նպատակի համար ստեղծված հիմնադրամից: Բնականաբար այս ծրագրի ընդդիմախոս պատգամավորները շատ մտահոգություններ ունեին: Սակայն հարկ ենք համարում մեջբերել ՀՀԿ-ական **Հակոբ Հակոբյանի** խոսքից մի հարցադրում, ով կողմ էր ծրագրին, բայց նա անհասկանալի էր համարում, թե արտոնությներ տրամադրելով այս մի բիզնեսին (ռուսաստանցի հայ գործարար Ռուբեն Վարդանյան), ինչու համանման արտոնություններ չեն տրամադրվում այլ ներդնողների:



# Հռոմի պապը կդիտարկի Հայաստան այցելելու հնարավորությունը

**Հունիսի 7-ին Սուրբ աթոռում Հայաստանի Հանրապետության առաջին ռեզիդենտ դեսպան Միխայել Մինասյանն իր հավատարմագրերն է հանձնել Հռոմի պապ Ֆրանցիսկոսին:**



**Դեսպան Մինասյանի եւ Հռոմի պապ Ֆրանցիսկոսի զրույցի ընթացքում զրուցակիցներն անդրադարձել են Հայաստանի եւ Սուրբ աթոռի երկկողմ պատմական կապերին, հարուստ մշակութային եւ հոգեւոր ժառանգությանը: ԱԳՆ հաղորդագրության համաձայն, դեսպան Մինասյանը նշել է, որ նպատակ ունի ուղղել Սուրբ աթոռում ՀՀ նորաստեղծ դեսպանության գործունեությունը երկկողմ մշակութային կապերի, հոգեւոր ընդհանրությունների առավել ընդլայնմանը, ինչպես նաեւ համաշխարհային մշակութային ժառանգության բաղկացուցիչ մաս կազմող հայկական քրիստոնեական ժառանգության պահպանմանն ու վերականգնմանը:**

**Դեսպան Մինասյանը Հռոմի պապին է փոխանցել Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի եղբայրական ողջույնը: Նա նաեւ երախտագիտություն է հայտնել վերջերս Հռոմի պապ Ֆրանցիսկոսի եւ Հայ կաթողիկե եկեղեցու հոգեւոր առաջնորդ Ներսես Պետրոս 19-րդի միջեւ կայացած հանդիպման ժամանակ քահանայապետի կողմից Հայոց ցեղասպանության առնչությամբ հնչեցրած դիրքորոշման համար:**

**Ներսես Պետրոս 19-րդի հետ հանդիպման ժամանակ Հռոմի պապ Ֆրանցիսկոսը վերահաստատել էր իր մոտեցումը Հայոց ցեղասպանության առնչությամբ՝ հնչեցրած 7 տարի առաջ, կրկնելով, որ «20-րդ դարի առաջին մեծ ցեղասպանությունը հայերինն էր»: Սրան չուշացան արձագանքել ինչպես թուրքական մամուլը եւ թուրքական արտաքին գերատեսչությունը՝ սկզբում ոչ բացահայտ, ապա նաեւ բողոքի գրավոր ցուցադրությամբ, թե լավ է զերծ մնալ երկկողմ հարաբերությունների համար «անդառնալի հետեւանքներ ծնող» քայլերից:**

**Դեսպան Մինասյանը Հռոմի պապին է փոխանցել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ Հայաստան այցելելու հրավերը: Քահանայապետը խոստացել է դիտարկել Հայաստան այցելելու հնարավորությունը:**

**Հռոմի պապի հետ հանդիպումից հետո, Սուրբ աթոռի արարողակարգի համաձայն, դեսպան Մինասյանն առանձնազրույց է ունեցել Սուրբ աթոռի պետքարտուղար կարդինալ Տարչիզիո Բերտոնեի հետ: Հանդիպմանը կարդինալ Բերտոնեն ողջունել է Սուրբ աթոռում դեսպանություն բացելու եւ ռեզիդենտ դեսպան նշանակելու ՀՀ որոշումը: Պետքարտուղարը հայտնել է նաեւ, որ Սուրբ աթոռի պետքարտուղարությունում քննարկվում է Հայաստանում նվիրակություն բացելու հարցը:**

**Վ. Պ.**

# Սյունիքի նոր մարզպետացու

**Սյունիքի մարզպետի հրաժարականից հետո մարզպետի նոր թեկնածուների անուններ սկսեցին շրջանառվել: Այդ շրջանառությունների մեջ հստակ երեւում էին Գորիսում առկա երեք տնտեսական շրջանակների շահերը: Հետաքրքական է, որ երեկ շրջանառության մեջ էր դրվել նոր անուն՝ Քաջարանի քաղաքապետ Վարդան Գեւորգյանի անունը: Վերջինս համարվում է պղնձամոլիբդենային գործարանի սեփականատեր Մաքսիմ Հակոբյանի շրջապատի մարդկանցից: Ասվում է, որ վերեւներում կանգ են առել հենց այս թեկնածուի վրա: Հերթական լրատվական «բադի՞կն» է սա, թե՞ տակն իսկապես մի բան կա՝ պարզ կլինի շատ մոտ ժամանակում:**

**Ս. Խ.**

# Մաթեմատիկայի միասնական քննությանը կմասնակցի 7 հազար դիմորդ

**«Մաթեմատիկա» առարկայից դիմորդները միասնական քննություն կհանձնեն հունիսի 11-ին: «Արմենպրես»-ի հետ զրույցում Գնահատման եւ թեստավորման կենտրոնի արտաքին համագործակցության բաժնի պետ Արա Խաչիրյանը նշեց, որ քննություններին կմասնակցի մոտ 7000 դիմորդ: «Մաթեմատիկա» առարկայի համար հանրապետությունում ձեւավորվել են 30 քննական կենտրոններ, որոնցից 10 տեղակայված են մայրաքաղաքում:**

**Հաջորդ քննությունը դիմորդները կհանձնեն հունիսի 14-ին օտար լեզուներից, 18-ին՝ «Ֆիզիկա» եւ 21-ին «Հայոց պատմության» առարկայից: Այս տարի դիմորդների թիվը շուրջ 15 հազար է:**

**Լրացուցիչ քննությունները կանցկացվեն հուլիսի 2-ին: «Քննությունների առաջին փուլին բացակայած այն դիմորդները, ովքեր կհիմնավորեն իրենց բացակայությունը հիվանդության պատճառով, իրավունք կունենան վերահանձնելու»,- ավելացրեց Խաչիրյանը: Երկրորդ փուլում իրավունք ունեն մասնակցել նաեւ բանակից զորացրված, միջին մասնագիտական հաստատություններում եւ քոլեջներում սովորող, ինչպես նաեւ արտասահմանից եկած հայ դիմորդները:**

*ԱՐՄԵՆՊՐԵՍ*

# Իլհամ Ալիեւն ինքնաառաջադրվել է գերտերությունների՞ համաձայնությամբ

1-ին էջից

Այս դեպքում ի՞նչ խոսք կարող է լինել «ինքնուրույն եւ անկախ արտաքին քաղաքականության» մասին: Ադրբեջանն ինչպե՞ս կարող է լինել «տարածաշրջանի առաջատար, որի կարծիքը հաշվի են առնում բոլորը», եթե նախագահի թեկնածությունը նախապես քննարկվում է դրսում, «ամենամեծ պետությունների» հետ, ապա նոր «կապիտալացվում» իբրեւ իշխող կուսակցության համագումարի որոշում:

Իր ելույթում Իլհամ Ալիեւը նաեւ ասել է. «Մենք մրցակիցներ չունենք»: Ըստ երեւույթին, դրանում նրան վստահեցրել են «ամենամեծ պետությունների» առաջնորդները: Բայց Իլհամ Ալիեւը սեփական «մրցակցությունից վեր բարձրության» վրա չէր լինի, եթե հերթական հիմարությունը չաներ: Նա ադրբեջանական ընդդիմությանը կապել է «արտաքին դրամաշնորհների» հետ: Եվ իհարկե, հայերի, որոնց հետ «ձեռք ձեռքի տված՝ ընդդիմությունը սեւացնում է Ադրբեջանի հեղինակությունը»:

Հիմարությունը՝ հիմարություն, բայց տպավորություն է ստեղծվում, որ «ամենամեծ պետությունների համաձայնության» մասին խոսելիս Նովրուզ Մամեդովը նկատի է ունեցել ադրբեջանական մտածելակերպը. այդ հանրությունը մեծ մասամբ հակված է իրենից դուրս աւյաններ վճիռն ընդունելու իբրեւ «ճակատագրի կամք»: Իլհամ Ալիեւի աշխատակազմի ղեկավարի տեղակալն, ամենայն հավանականությամբ, հենց այդ կանխատրամադրվածությունն էլ նկատի է ունեցել: Համարյա ստացվել է ինչպես հայտնի ֆիլմում՝ «ամեն օր տիեզերագնացների է տեսնում, Իտոյանին է տեսնում...»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# Խոսքը կարող է կյանք արժենալ, կամ զենքի մեջ դրված փամփուշտը նախատեսված է միայն թշնամու համար

*1-ին էջից*

Արմանը ծառայում է Նոյեմբերյանի այն նույն զորամասում, որտեղ մեկ ամիս առաջ դժբախտություն էր գրանցվել: Ծառայակցի կողմից սպանվել էր ժամկետային զինծառայող Լյուքս Ստեփանյանը, մյուս զինվորը հրազենային վնասվածքով դեռ հիվանդանոցում է: **Արմանը** **Լյուքսին** ճանաչել է, շփվել են, զրուցել: Իր խոսքերով՝ երկու տղաներն էլ շատ լավն էին, շփվող, լավ մարդիկ, վատ վարքով աչքի չեն ընկել: «Ուղղակի պահի տակ տաքացել են, ու էդպիսի բան է եղել», ասում է Արմանն ու հայացքը փախցնում: Ընկերոջ մահվան մասին խոսել չեն ցանկանում: Պատմում են, որ դեպքից հետո զորամասում մի տեսակ լռություն էր, աշխուժությունն էր կորել:



*Էդմոնդը եւ Արգիշտին*

«Մենք որ լսում էինք, որ ուրիշ զորամասերում նման բաներ են լինում՝ վատ էինք զգում, որովհետեւ իրենք էլ մեզ նման տղաներ են, բայց, որ մեր զորամասում նման բան եղավ, արդեն ուրիշ ձեւով ապրեցինք, մեր ընկերն էր, զինծառայող, ու ինքն էլ մեզ նման ուզում էր շուտ ծառայեր ու գնար տուն, հասներ իր ընտանիքին, իր ծնողներին, բայց զորամասից իր դագաղը հանեցին: Էդ շատ վատ էր, եսիմ, ոչ մեկը չի ուզում, որ նման բան լինի, ուղղակի պահ էր, տաքացան, ու բան եղավ», ասում է շարքային զինծառայող **Արթուրը**:



*Արման Խլղաթյան*

Զորամասի վերջում կանաչ գույնի երկաթյա ծխարան կա: Դեպքը հենց այդ ծխարանում է տեղի ունեցել: «Հանգստացող հերթափոխը եղել է ծխարանում. պահակային ծառայության կանոնագիրքն են կարդացել եւ զրուցել: Մուտքի դռան մոտ կանգնած ժամապահը ժամ է հարցրել Լյուքս Ստեփանյանին եւ եւս երեք պահակայիններին, վերջիններս ժամ չեն ունեցել ու չեն պատասխանել: Այնուհետեւ մահացած զինվորի եւ ժամապահի միջեւ խոսակցություն է եղել, ու հնչել է կրակոցը: Արձակվել է մեկ գնդակ՝ ծխարանի ուղղությամբ, ըստ նախնական ենթադրությունների եւ քննչական ծառայության ներկայացրած նյութերի՝ գնդակը դիպել է սկզբից վիրավորին, այնուհետեւ պատից անդրադարձել է Լյուքս Ստեփանյանին», ներկայացնում է զորամասի հրամանատար **Վահագն Ասատրյանը**: Նրա խոսքերով՝ կրակոցը եղել է ոչ թե կրծքին դրած դիրքից, այլ իջեցնելու պահին՝ գոտկատեղից: «Սկզբից կրակողը զենքը պահել է այդ ուղղությամբ, սակայն այլ զինվոր ասել է՝ «Իջեցրու, հո խաղալիք չէ»: Կրակողը զենքն իջեցրել է ու այդ պահին հնչել է կրակոցը»: Դեպքից հետո զինվորները հաճախ են լինում ծխարանում, երբեմն ոչ թե ծխելու, այլ ուղղակի մտորելու: Յուրաքանչյուրն իր մեջ վերլուծում է կատարվածը. ինչպե՞ս եղավ ու ինչո՞ւ: Վերջին հարցին պատասխանել գրեթե ոչ ոք չի կարողանում: Միայն գիտեն, որ պետք է զուսպ լինել, հաշվի առնել բառն ու դիմացինին չվիրավորել, չհայհոյել, քանի որ խոսքը կարող է կյանք արժենալ:

Շարքայիններ Էդմոնդն ու Արգիշտին շուտով կավարտեն ծառայությունը: Իրենց խոսքերով՝ մինչ բանակ գալը բոլորն էլ խորհուրդ են տալիս՝ ի՞նչ ասել, ո՞նց ներս մտնել ու ո՞նց բարեւել: «Սուտ բաներ են: Զինվորը պետք է ընդամենը երկու բան հիշի՝ իր ծառայության ընթացքում՝ տանն իրեն սպասողներ կան, որ ինքն ընտանիք ունի, ու էն փամփուշտը, որ դրված է իր զենքի մեջ, նախատեսված է միայն թշնամու համար: Մնացած ամեն ինչն անցողիկ է: Մի օր լավ, մի օր վատ, բայց սա ծառայություն է, տղայի համար է, ուղղակի պետք է մի քիչ հանդուրժող լինել ու չհայհոյել», ասում է **Էդմոնդը**: **Արգիշտին** էլ հավելում է, որ իսկական տղամարդը հայհոյանքով չի հաստատվում: «Դրանք լակոտական բաներ են: Բանակում մեծանում ես: Պետք չէ սադրել, պետք չէ ձեռ առնել: Տղաները պետք է գան բանակ ու նախ մտածեն իրենց ընտանիքների մասին, հետո նաեւ, որ իրենց վրա պարտավորություն կա՝ ծառայել հայրենիքին: Հայ զինվորը չպետք է հայ զինվորի ձեռքով մահանա»:

Զորամասի սպաներից **Սարգիսը** պատմում է, որ դեպքից հետո զինվորների հետ են զրուցել, քննարկել, փորձել են հասկանալ թերացումներն ու դրանք ուղղել: «Թերացումները երկու կողմից են: Փորձում ենք շտկել, որ առավելագույնը քիչ լինեն նման դեպքերը, առաջնորդվենք գրքով ու ստեղծենք կանոնադրային հարաբերություններ»: Սարգիսը, որ արդեն 8 տարվա պայմանագրային զինծառայող է, հավաստիացնում է, որ ժամանակի ընթացքում բանակում բարեփոխումները նկատելի են: 10 տարի առաջ, ամեն ինչ այլ էր, հիմա շատ բան է փոխվել: «Մենք չէինք ուզում, որ կորցնելուց հետո նոր ինչ-որ բան փոխվեր, բայց պատկերացրեք, փոխվեց ու փոխվեց ոչ միայն սպաների, այլեւ զինվորների մեջ: Նախ հասկացան, որ պետք չէ հայհոյել, որ պետք չէ լինել դյուրագրգիռ ու դիմել զենքի: Հիմա ուզում ենք ավելի շատ զրուցել զինվորների հետ, հասկացնել, որ լինեն հարգանքով: Մենք փորձում ենք դասեր քաղել կատարվածից ու շտկել, միաժամանակ, գիտակցում ենք, որ բանակում անհնար է նման դեպքերն իսպառ կանխել: Տարբեր ընտանիքներ, տարբեր դաստիարակություն, գաղափար ու հասկացողություն՝ եւ բոլորին դժվար է մեկ տեղում համախմբել: Դրա համար էլ ընդհարումներ են լինում: Սպաների թերությունն այն է, որ զինվորին պետք է ժամանակ տրամադրեն: Զինվորը չպետք է մենակ մնա, միշտ պետք է զբաղված լինի: Կարգացուցակով հաստատված շարժվի, եթե կանոնադրությամբ շարժվեց՝ ոչ մի զինվորի ոչինչ չի լինի», ասում է Սարգիսը:

Լյուքսի սպանությունից դասեր շատերը քաղել են, ցավալին այն է, որ ողբերգությունից հետո են գնահատում մարդկային կյանքն ու արժեքները: Ու թեպետ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն արգելել է զորամասերում օգտագործել «Բանակը հասարակության հայելին է» կամ «Ամեն բանակում էլ նման դեպքերը կատարվում են» արտահայտությունները, այնուամենայնիվ, գոնե վերջին դեպքը հասարակության բարքերի, անհավասարակշիռ մոտեցման, տղայական պահվածքի ու վերաբերմունքի հետեւանք էր: Վերաբերմունք, որ խլեց երիտասարդի կյանքն ու մեկ այլ երիտասարդի էլ հանցագործ դարձրեց:

## ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

# Երեւանի կանաչապատումը կկրկնապատկվի

**Ինչպես տեղեկացանք Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, քաղաքապետ Տարոն Մարգարյանը հանձնարարել է կրկնապատկել մայրաքաղաքի կանաչապատման ծավալներն ու նոր մոտեցումներ կիրառելու քայլեր ձեռնարկել. «Մայրաքաղաքի կանաչապատման ու ծաղկապատման գործում 2012-ին գրանցված դրական տեղաշարժն ակնհայտ էր, եւ այն ծավալները, որոնք ապահովեցինք նախորդ տարի, մենք այս տարի պետք է կրկնապատկենք: Մայրաքաղաքի բոլոր հնարավոր վայրերում պետք է ստեղծենք անտառ-պուրակներ: Հետեւողական եւ ամենօրյա աշխատանք պետք է տարվի նաեւ ծաղկապատման ու ձեւավորման ուղղությամբ», նշել է Տարոն Մարգարյանը:**

**Բնապահպանության վարչության պետը զեկուցել է, որ մայրաքաղաքում ընթացող կանաչապատման աշխատանքներն առավել ակտիվացնելու նպատակով շարունակվում է կանաչապատման ձեռնարկություններում սեզոնային թափուր հաստիքների համար ցանկացողների աշխատանքի ընդունումը:**

# Հասարակական տրանսպորտի սպասարկումը վերահսկվո՞ւմ է

**Քաղաքապետ Տարոն Մարգարյանին զեկուցվել է, որ շարունակվում է հասարակական ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման որակի ուղղությամբ ամենօրյա հսկողությունը: Քաղաքապետարանի հաղորդագրություններում մշտապես տեղ գտնող այս նախադասությունը թերեւս ճիշտ կլիներ, որ տեղ գտներ «Սուտասանը» հեքիաթում՝ թագավորության կեսը ստանալու ակնկալիքով:**

# Ասֆալտապատում եւ վերաասֆալտապատում

**Մայրաքաղաքում շարունակվում են քաղաքապետարանի 2013-ի ծրագրով նախատեսված ասֆալտապատման աշխատանքները: Այդ մասին նշվել է քաղաքապետարանում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ: Շինբարեկարգման վարչության պետը զեկուցել է, որ ընթացքի մեջ է նաեւ կապալառուների կողմից սեփական միջոցներով 2012-ին անորակ եւ թերի կատարած ասֆալտբետոնե ծածկույթի թերությունների վերացման գործընթացը:**

**Քաղաքապետ Տարոն Մարգարյանը մշտական հսկողության պահանջ է դրել մայրաքաղաքի փողոցների ասֆալտբետոնե ծածկույթի վերականգնման աշխատանքների ավարտից հետո համապատասխան կազմակերպությունների կողմից ներքին կոմունիկացիոն աշխատանքների իրականացման նպատակով քանդման թույլտվությունները բացառելու վերաբերյալ:**

# Կվերակառուցվի նաեւ «Հաղթանակ» զբոսայգին

**Հանրապետության հրապարակի վերակառուցման հայեցակարգային նախագծի հանրապետական ճարտարապետական բաց մրցույթից բացի՝ առաջիկայում կներկայացվեն նաեւ մայրաքաղաքի մյուս հրապարակների վերակառուցման եւ զարգացման մասով բաց մրցույթները: «Հաղթանակ» զբոսայգու վերակառուցման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով քաղաքապետ Տարոն Մարգարյանը հանձնարարել է քննարկել այգու վերակառուցման ներդրումային առաջակը, ուսումնասիրել «Հաղթանակ» զբոսայգու ներկա վիճակն ու գույքագրում կատարել:**

**Ա. Մ.**

# Կարկուտից տուժած գյուղացիների աջակցության խնդրանքը բավարարվեց ամբողջությամբ

«Տաշիր» բարեգործական հիմնադրամը, **Կարեն** եւ **Սամվել Կարապետյանների** գլխավորությամբ, ամբողջությամբ բավարարել է Լոռու մարզի՝ կարկուտից առավել տուժած Ագարակ, Լեջան եւ Ամրակից համայնքների ներկայացրած առաջարկները՝ հողատերերին աջակցելու վերաբերյալ: Այս մասին տեղեկացրեց ԱԺ պատգամավոր Կարեն Կարապետյանի գրասենյակի ղեկավար **Արտակ Ճաղարյանը** վերոնշյալ համայնքներ այցելության ժամանակ: Լոռու փոխմարզպետ **Տիգրան Բաղոյանը** եւ «Տաշիրի» ներկայացուցիչը նշյալ համայնքների բնակչության հետ հանդիպումների ժամանակ համոզվեցին, որ առաջարկները ներկայացվել են հենց համայնքների կողմից՝ տուժած բնակիչների անմիջական մասնակցությամբ: Հիշեցնենք, որ երեք համայնքներում ստեղծված հանձնաժողովները հաշվարկել էին վնասի չափերը եւ տուժած հողատերերին աջակցելու առաջարկ ներկայացրել Լոռու մարզպետարան: Լոռու մարզպետ **Արթուր Նալբանդյանը** դիմել էր ԱԺ պատգամավոր Կարեն Կարապետյանին՝ համայնքների բնակիչներին հնարավորության սահմաններում օգնելու նպատակով:

Ա. Ճաղարյանը տեղեկացրեց, որ բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշել է համայնքների պահանջարկը բավարարել ամբողջությամբ, այն է՝ կարտոֆիլի ցանքատարածությունների համար (դրանք վերականգնելի են) տրամադրել ազոտական պարարտանյութ, իսկ ցորենի ցանքատարածությունների համար վճարել գյուղացիների հողի հարկը՝ ըստ ներկայացված ցուցակների: Պարարտանյութի գնման գումարն արդեն իսկ փոխանցված է, իսկ հողի հարկի վճարումները կկատարվեն առաջիկա օրերի ընթացքում:

*«Տաշիր» բարեգործական հիմնադրամի մամուլի ծառայություն*

## «Քաոսի տեսություն»

# Մի՞թե «սուրբ» գաղտնիք է, թե ովքե՛ր են ֆինանսավորում, ինչի՛ համար եւ ի՞նչ դիմակի ներքո

### *«Արաբակա՞ն», թե՞ իսկական գարուն*

Ներկայումս արեւմտյան քաղաքագիտության մեջ մոդայական է դարձել «քաոսի տեսությունը», որը սերում է բարդ ոչ գծային դինամիկ համակարգերի ֆիզիկական տեսությունից: Վերջինիս ակունքներում կանգնած են 20-րդ դարի ականավոր մաթեմատիկոսներ Ա. Պուանկարեն, Ա. Ն. Կոլմոգորովը եւ Նոբելյան մրցանակի դափնեկիր Ի.Պրիգոժինը: Հենվելով իր «չհավասարակշռված պրոցեսների ֆիզիկայի» վրա, Ի. Պրիգոժինը մուծել է «բիֆուրկացիա» տերմինը (լատիներեն՝ bifurus նշանակում է երկատում): Ինչպես ցույց են տալիս անհավասարակշռությունների թերմոդինամիկայի տվյալները, համակարգի անկայունության հետեւանքով որոշակի կետում վեկտորի կամ ուղղության ընտրությունը մեծապես կախված է այսպես կոչված ֆլուկտուացիաներից (պատահական փոփոխություններից): «Ֆլուկտուացիան,- նշում են Ի. Պրիգոժինը եւ Ի. Ստենգերսը, - համակարգին ստիպում է ընտրել այն ուղին, որով կարող է ընթանալ համակարգի էվոլյուցիան: Բիֆուրկացիայի միջոցով անցումը նոր վիճակին նույնքան պատահական է, որքան մանրադրամով վիճակ գցելը... Անհավասարակշիռ գործընթացների դեպքում պատահական փոփոխությունները որոշում են համակարգի էվոլյուցիայի ելքը»: Նույնը վերաբերում է նաեւ հասարակությանը, որը միագիծ օրինաչափությամբ զարգացող համակարգ չէ: Պատմական գիտակցության մեջ հետին պլան է մղվում կանխատրված օրինաչափությամբ հասարակության վերընթաց զարգացման ընդհանուր տեսական գաղափարը, որին հաճախ հարմարեցվում է իրական պատմական ընթացքը: Ուշադրության կենտրոնում են ներքին հակասությունների սրման միջոցով ճգնաժամային իրադրություններ հարուցելու կամ «սոցիալական պայթյունի» նոր տեխնոլոգիաները:

20-րդ դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ում ակտիվ փորձեր ձեռնարկվեցին «Քաոսի տեսությունը» քաղաքականացնելու, հարմարեցնելու սոցիալական պրոբլեմների ուսումնասիրության, համաշխարհային քաղաքականության իմաստավորման խնդիրներին: Այդ գործում նշանակալի է ֆիզիկայի գծով 1984թ. Նոբելյան մրցանակի դափնեկիր, ամերիկացի գիտնական Մյուռեյ Գել-Մանը: Պետդեպարտամենտի եւ Պենտագոնի հովանու ներքո նա ստեղծել է Սանտա Ֆե տիպի բարդությունների ուսումնասիրության ինստիտուտ, որտեղ ստաժավորվել են վերոնշյալ գերատեսչությունների, ինչպես նաեւ ԱՄՆ խոշորագույն վերլուծական կենտրոնների, այդ թվում՝ ՌԷՆԴ կորպորեյշնի աշխատակիցները:

Քաղաքականացված «Քաոսի տեսությունը» հիմնվում է հետեւյալ դրույթների վրա:

Աշխարհը ոչ գծային բարդ համակարգ է, որը բաղկացած է ազգերից, պետություններից, կրոններից եւ այլն, որոնք իրենց հերթին եւս, առանձին-առանձին բարդ դինամիկ համակարգեր են:

Դինամիկ համակարգերը երբեք չեն հասնում հավասարակշռության վիճակի:

Իրար հետ փոխգործակցող սոցիալական մեծ համակարգերն ունակ են միմյանց հասցնելու այնպիսի կրիտիկական վիճակի, երբ անգամ ոչ նշանակալի, առերեւույթ պատահական իրադարձությունները կարող են առաջացնել շղթայական ռեակցիա՝ աղետաբեր հետեւանքներով: Նախապես պլանավորված այդ գործողությունը ստացել է «ինքնակազմակերպվող բեկում» անվանումը:

Ասվածից քաոսի տեսության ամերիկացի հետեւորդները մի շարք կիրառական բնույթի հետեւություններ արեցին:

Կայունությունն անիրական է եւ երբեք չի կարող նպատակ լինել, քանի որ նրա պահպանումը խիստ թանկ է նստում Միացյալ Նահանգների վրա:

ԱՄՆ-ի ազգային շահերի արդյունավետ եւ նվազ ծախսատար պաշտպանությունը կարելի է ապահովել ավելի ճկուն մեթոդներով:

ԱՄՆ-ը պետք է ձգտի «ակտիվորեն փոփոխություններ ներմուծել» այն հասարակություններում, որոնք գտնվում են ճգնաժամային վիճակում:

Բիֆուրկացիայի կետում գտնվող համակարգը հեշտ է փլուզել կետային կամ կետ-կետ բնույթի ներգործությունների շնորհիվ:

Անհրաժեշտ է կետային ներգործությունների նոր տեխնոլոգիաներն ավելի լայնորեն օգտագործել, եթե դա համապատասխանում է Ամերիկայի շահերին:

Երկարաժամկետ կանխատեսումներն առասպել են: Դրա փոխարեն առաջարկվում է բռնել ճգնաժամային համակարգերը «կետային ներգործություններով» փլուզելու կամ «ինքնակազմակերպվող բեկումի» ուղին:

Ասվածը կաբինետային տեսաբանների պարապ մտավարժանք չէ, այլ հետխորհրդային տարածքում ԱՄՆ-ի քաղաքականության պատասխանատուներից մեկի հոդվածներից բերված մեջբերում: Չարժե լրջորեն քննարկել այն հարցը, թե որքանով է «Քաոսի տեսությունը» ճշգրիտ կերպով նկարագրում համաշխարհային գործընթացները եւ ինչ չափով է նրա կիրառումը համապատասխանում ԱՄՆ-ի երկարաժամկետ շահերին: Սեփական փորձով ինքներս բազմիցս համոզվել ենք, որ կեղծ գիտական տեսությունը կարող է դառնալ գործողության ղեկավարման ուղեցույց: Գլխավորն այլ է՝ «Քաոսի տեսությունը» ապացուցում է, որ ԱՄՆ-ի քաղաքական-դիվանագիտական եւ ռազմական ղեկավարության մեջ կան ուժեր, որոնց համար կայունությունը ոչինչ է, որոնք համոզված են, որ ապակայունացումը, խաղը դեպի լարվածության սրումը, իրենց երկրի շահերի ապահովման լավագույն եղանակն է: Դրանով իսկ հանվում է Մեծ Մերձավոր Արեւելքում ԱՄՆ-ի հարուցած պայթյունի եւ Ամերիկայի պետական շահերի միջեւ թվացյալ հակասությունը: Դա, որքան էլ պարադոքսալ հնչի, հակասությամբ քողարկված հրահրչություն է:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Միացյալ Նահանգներին չհաջողվեց իրականացնել համաշխարհային տիրապետության մեսիական գաղափարը: ԽՍՀՄ-ը թույլ չտվեց: Ինչն էլ հանգեցրեց բազմամյա «սառը պատերազմի» եւ «զսպման ռազմավարության» ի հայտ գալուն:

ԽՍՀՄ փլուզումը խոշորագույն աշխարհաքաղաքական աղետներից մեկը դարձավ: 1990-ականներին Ամերիկան զգուշաբար, քայլ առ քայլ, սակայն անշեղորեն արագություն զարգացնելով, ստուգեց իր հնարավոր միջամտությունների սահմանները: Մինչեւ որ, վերջապես, որոշեց, որ այդպիսի սահմաններ ԱՄՆ-ի համար չկան, որ ամեն ինչ հնարավոր է: Եկան Բուշ կրտսերի ժամանակները: Բուշը հանդես եկավ ԱՄՆ-ի համաշխարհային տիրապետությունը դե յուրե եւ դե ֆակտո հաստատելու «առաքելությամբ», ինչը, շրջհոսելի բանաձեւմամբ, անվանում ենք միաբեւեռ աշխարհ: Ոչ միայն չընդունվեց Բուշ կրտսերի անքող թելադրանքի ռազմավարությունը, այլեւ բոլոր մայրցամաքներում ուժեղացրեց հակաամերիկյան տրամադրությունները: Ուրվագծվեց «Բոլորն Ամերիկայի դեմ եւ Ամերիկան բոլորի դեմ» հակամարտության մռայլ հեռանկարը: Նման դիմակայության համար Միացյալ Նահանգները նույնիսկ չուներ բավարար ռեսուրսներ: Հենց այդ ժամանակ առաջնաբեմ ելավ «փոխգործակցության նոր դարաշրջանի» գաղափարը, որով հանդես եկավ ԱՄՆ-ի առաջին սեւամորթ նախագահ, խաղաղության գծով Նոբելյան մրցանակի դափնեկիր Բարաք Օբաման:

«Զսպման ռազմավարության» հունով ընթացող այս կոնցեպցիան ոչ միայն չհամապատասխանեց նոր դարաշրջանի իրողություններին, այլեւ, որպես գաղափարախոսական կարկատան, շուտով սկսեց ամբողջ կարերով մեկ ճարճատել՝ փաստելով նորկտակարանյան պատգամի ճշմարտությունը. «Ոչ ոք նոր շորի կտորը չի կարկատի հին հանդերձի վրա, քանզի... պատռվածքը ավելի վատ է լինում» (Մատթ. 9:16)»:

Ակներեւ դարձավ Օբամայի գաղափարի անկենսունակությունը՝ տեւելով ոչ ավելի, քան մեկ տարի:

Արագորեն պարզվեց, որ հումանիտար օգնության ամերիկյան բազմամիլիարդանոց ծրագրերը ոչինչ չեն լուծում՝ փողերը վերցնում են, սակայն ոչ մի կերպ չեն հրաժարվում սեփական պետությունների ինքնիշխանությունից:

Իրեն ամենեւին չարդարացրեց ընտրանիներին կաշառելու պրակտիկան, երբ Միացյալ Նահանգները աչք է փակում «ժողովրդավարության ազգային առանձնահատկության վրա», եթե այդ երկրները կանգնում են ամերիկյան ռազմավարության նավարկուղու վրա:

Նույնիսկ գլոբալ ֆինանսական ճգնաժամը չկարողացավ «թզուկներին համախմբել Գուլիվերի շուրջը»:

Այս պայմաններում պահանջարկված դարձան «քաոսի տեսության» եռանդուն ջատագովները: Գիտակցելով արաբական աշխարհում հեղափոխական ցնցումների անխուսափելիությունը եւ այդ տարածաշրջանում ստատուս քվո պահպանելու քաղաքականության համար ռեսուրսների խիստ անբավարարությունը, ԱՄՆ-ն անցավ Մերձավոր Արեւելքի երկրներում ներքին հակասությունները սրելու եւ «պայթեցման բռնկիչը վառոդով լի տակառին մոտեցնելու» եւ դրանով իսկ այստեղ հեղափոխությունների շղթայական ռեակցիա հրահրելու ռազմավարությանը: Ունենալով առաջին քայլի կամ խաղի կանոններ առաջադրելու առավելությունը, ապրիորի Ամերիկան ինքնըստինքյան դառնալու է ճգնաժամից գլխավոր օգուտը ստացողը: Դա ինձ հիշեցնում է հայտնի հայկական ասացվածքը. «Երկու շուն մսի կտորի համար կռվեցին, ճամփորդի բանը հաջողվեց»:

Եթե Մեծ Մերձավոր Արեւելքում նոր ռազմավարության ստուգափորձը հաջող անցնի, ապա որոշ ժամանակ անց հետխորհրդային տարածքում մենք շուտով կտեսնենք «զայրացած քաղաքացիների» ընդվզումի նոր բռնկումներ: Դրանք, բնականաբար, կողջունվեն եւ աջակցություն կստանան խաղաղության սեւ աղավնու կողմից: Դրանք արդեն կլինեն նոր սերնդի «գունավոր» հեղափոխություններ, որոնք հնգի կրակից առավել կբորբոքեն հետխորհրդային հասարակությունների ներհակությունները՝ կրակի մեջ նետելով դյուրավառ մի շարք հասկացություններ՝ «ազատություն», «արդարություն», «իրավահավասարություն» եւ այլն: Կփորձեն արհեստականորեն ստեղծել այնպիսի մի քաոս, որը կընթանա ժողովրդավարության, մարդու եւ ազգի իրավունքների մասին ճամարտակող նորօրյա աստվածների նախապատրաստած ուղիով: Ուղի, որը խրախուսվում է կանաչ ձեռքով, այսինքն՝ դոլարով, եւ «թվիտերային հեղափոխության» ներգործուն դրոշակումներով: Խոսքը միլիարդավոր դոլարների մասին է, որոնք արտասահմանյան կառավարությունների եւ հիմնադրամների կողմից ամեն տարի սրսկվում են հետխորհրդային հասարակությունների ՀԿ-ներին: ARD գերմանական հեռուստաընկերությանը ապրիլի 5-ին տրված հարցազրույցում ՌԴ նախագահ Վ.Պուտինը նշել է, որ արտասահմանից ֆինանսավորում ստացող ոչ կառավարական կազմակերպությունների նկատմամբ պետության հսկողության ուժեղացման մասին համապատասխան օրենքն ընդունելուց հետո միայն չորս ամիսների ընթացքում այդ ՀԿ-ների հաշվին արտասահմանից փոխանցվել է մեկ միլիարդ դոլար, որից 855 միլիոնը՝ դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով: Չմոռանանք նշել, որ այդ կազմակերպություններից շատերը զբաղվում են քայքայիչ ներքաղաքական գործունեությամբ: ՌԴ նախագահը հարց է տալիս. «Մի՞թե մեր հասարակությունը չպետք է իմանա, թե ո՛վ եւ ինչի՛ համար է ստանում փողերը»: Այո, այդ ինչ «սուրբ գաղտնիք» է թաքցվում հասարակությունից:

Հայաստանում, Վրաստանում, Ղրղզստանում եւ նույնիսկ Ուկրաինայում նույն կանաչավուն, իմա՝ դոլարային գործընթացներն ազդում են հասարակական-քաղաքական մթնոլորտի վրա: Հայաստանում վերջին նախագահական ընտրությունները ակներեւ կերպով ցույց տվեցին, որ սոցիալական բնույթի դժգոհությունները հաճախ ուղղորդվում եւ ուժգնացվում էին դրսից՝ արդարության, իրավունքի մասին ճառաբանող որոշ ՀԿ-ների եւ ժողովրդի «ցավերով բոցավառված» գործիչների կողմից: Ակներեւ էր, որ նրանք ուզում էին ոչ թե իսկական, այլ «արաբական սեւ գարուն» կամ դրա նման մի բան...

Հետխորհրդային երկրներում գործում են հարյուրավոր, եթե ոչ հազարավոր հասարակական կազմակերպություններ, որոնք շռայլորեն ֆինանսավորվում են արտասահմանից: Ինչպիսի՞ն է այդ գործունեության ընդհանուր արդյունքը: Զարգացած քաղաքացիական ինստիտուտնե՞րը, որոնք ազգային իշխանություններին մղում են ընթանալու ազգային գերակայությունների ուղիով: Ոչ: Միգուցե այդ երկրներում կազմավորվել են հասարակական կառուցվածքներ, որոնք խորհրդատվական օգնություն են ցույց տալիս ազգային ընտրանուն՝ պետականության համար կարեւոր հարցերում: Նույնպես ոչ: ՀԿ-ների հաշվետվությունները պահանջարկված են միայն արտասահմանյան դոնորների կողմից: Այսինքն՝ նրանց, ովքեր ինքնին եւ ձեւակերպում են իրենց կողմից ֆինանսավորվող ՀԿ-ների գործունեության ուղղությունները: Հրահրել եւ ստեղծել իրենց նպաստավոր ռեժիմներ: Ստեղծել իբր թե մարդու ազատության եւ իրավունքների մասին միջազգային օրենքներ, որոնք իրենց արտաքին լրջությամբ զավեշտալի են, քանի որ, ըստ էության, կոչված են ոչ թե իսկապես պաշտպանելու մարդու, ազգերի ինքնորոշման իրավունքն ու ազատությունները, այլ հրահրելու կրոնական, սոցիալական եւ քաղաքական բնույթի հակամարտություններ:

**ՄԱՆՈՒԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի փիլիսոփայության ամբիոնի վարիչ**

ԱԶԳ





# «Թափթփուկները բարձրացել են Աթաթուրքի պալատի տանիքը, թե՝ չենք թողնի քանդել, քանդելու ենք»

## Հայտարարեց վարչապետ Էրդողանը հունիսի 9-ի ելույթներում

Մինչ Թուրքիայում տարածվում էին Ստամբուլի Թաքսիմ հրապարակի «Գեզի» այգում ծայր առած ոստիկանության հետ բախումներով ընթացող բազմամարդ ցույցերը, ցուցարարները՝ անվանելով կառավարությանը ֆաշիստական, պահանջում էին վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հրաժարականը, իսկ աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցները «Թուրքական գարնան» հետեւություններ էին անում, համեմատելով իրադարձությունը արաբականի հետ, հունիսի 7-ի լույս գիշերը Ստամբուլում վայրէջք կատարեց Թունիսից վերադարձող Էրդողանի ինքնաթիռը:

Վարչապետ Էրդողանը Աթաթուրքի անվան օդանավակայանում դիմեց հավաքված տասնյակհազարավոր մարդկանց, որոնք դիմավորելու էին եկել: Թվում էր, թե բողոքի ցույցերի ծավալումը երկրի 67 քաղաքներում, ցուցարարների հանդեպ գործադրած անհամաչափ ուժի համար ոստիկանության միջազգայնորեն դատապարտումը, ցույցերին աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցների դրական արձագանքը կստիպի Էրդողանին զիջողականություն դրսեւորել:

Նա ոչ միայն չզիջեց ցուցարարներին, այլեւ արդարացրեց ոստիկանությանը: Նույն ոգով անցան նաեւ Էրդողանի ելույթները Ադանայում, Մերսինում, Անկարայի օդանավակայանում եւ արվարձաններում: Նա վերստին «թափթփուկ» անվանեց ցուցարարներին, դատապարտեց ցուցարարների թիկունքում թաքնված ներքին եւ արտաքին ուժերին, սպառնաց ֆինանսաբանկային շրջանակներին եւ ընդգծեց, որ նույնությամբ իրականացվելու է Թաքսիմ հրապարակի վերակառուցման նախագիծը:

Այս նախագծով, որը կտրականապես մերժում են հարյուրհազարավոր ցուցարարներ, նախատեսվում է վերականգնել 1780-ին կառուցված «Սելիմիե» զորանոցը, քանդել Աթաթուրքի անվան մշակույթի պալատը եւ «Գեզի» այգում կառուցել մզկիթ: 1938-ին քանդված զորանոցը օսմանյան կառույց էր, մզկիթը՝ իսլամական աղոթատեղի: Այլ կերպ՝ զորանոցն ու մզկիթը խորհրդանշում են Օսմանյան կայսրությանը, որը կրոնապետություն էր:

Աթաթուրքի մշակույթի պալատն էլ քեմալականների հիմնադրած աշխարհիկ-հանրապետական Թուրքիան է խորհրդանշում: Պալատը քանդելիս վերակառուցել զորանոցը՝ մզկիթի շինարարությունով հանդերձ, կնշանակի՝ կողմնորոշվել դեպի Օսմանյան կայսրություն: Մինչդեռ, քեմալականները Թուրքիայի հանրապետության հիմնադրման օրից մերժում էին այն, ինչ օսմանյան էր, նույնիսկ պատմագրությունը: Ահա թե ինչու ցուցարարները կտրուկ հակադրվում են Թաքսիմում զորանոցի վերականգնմանն ու մզկիթի կառուցմանը եւ նրանք ոչ մի կերպ չեն հաշտվում Աթաթուրքի պալատի քանդելու մտքի հետ, բայց՝ ապարդյուն:

Դրանում համոզվելու համար կարելի է անդրադառնալ վարչապետ Էրդողանի հունիսի 9-ի ելույթներին: Նախքան անդրադառնալը նշենք, որ նրան հոծ բազմությունը ամենուրեք դիմավորում էր «Թուրքիան քեզնով հպարտանում է» վանկարկումներով, դիմավորողները, ի տարբերություն «Մենք Աթաթուրքի զինվորներն ենք» բացականչող ցուցարարների, «Մենք Էրդողանի զինվորներն ենք», «Պինդ կաց, մի ընկրկիր, մենք քեզ հետ ենք» վանկարկումներով հաճախակի ընդհատում էին նրան ելույթը: Ի դեպ, շրջապատում աչքի էին զարնում «Մենդերեսին կախել եք, Օզալին՝ թունավորել, չենք թողնի հոշոտել Էրդողանին» մակագրությամբ ցուցապաստառները:

Ադանայի օդանավակայանում Էրդողանն ասաց. «Ձեր վարչապետն Ալլահի օրհնությամբ ամուր կանգնած է, քանի դեռ ողջ է, չի ընկրկի ոչ մեկի առջեւ: Աշխարհում միմիայն արարչին է պարտք, այն էլ՝ իր հոգին: Դուք մի վարվեք այնպես, ինչպես վարվում է մի քանի թափթփուկ: Դրանք ավերում են, թալանում, այրում: Դա թափթփուկի բնութագիրն է: Կա մի խավ, որը չի հանդուրժում Թուրքիայի հզորացումը: Ինչ էլ որ անես՝ հակադրվում է: Հավաքվածների 95 %-ը նույնիսկ չգիտեր «Գեզի» այգու տեղը»:

Էրդողանը Ադանայից անցավ Մերսին, որտեղ էլ նշեց. «Այն երիտասարդությունը, որն իր վարչապետին անասելի հայհոյանքներով վիրավորում է, չի կարող իմը համարվել: Այդ հայհոյանքները պատերին գրող երիտասարդությունը չի կարող իրավունքի պայքար մղել: Մի կողմից՝ խանութները, առեւտրի կենտրոնները մտնել թալանես, ավերես, այրես, իսկ մյուս՝ իրավունքի համար պայքարես: Ի՞նչ իրավունք: Ես իմն եմ համարում ողջամիտ երիտասարդներին»:

Մերսինից Էրդողանն ուղեւորվեց Անկարա, օդանավակայանն ավելի քան բազմամարդ էր, շրջակայքը՝ նմանապես: Նա տասնյակհազարավոր բազմությանը դիմեց հետեւյալ խոսքերով. «Թող բառարանը բացեն եւ նայեն, թե որն է թափթփուկի սահմանումը: Թափթփուկը նա է, ով ավերում, կողոպտում ու այրում է: Հետեւաբար, թող չնեղանան սրանց աջակցողները նույնպես թափթփուկներ են: Սրանք ժամանակին հարձակվել են գլխաշոր կրող իմ քույրերի վրա: Հիմա մզկիթ են մտնում գարեջրի շիշը ձեռքին: Այս երկրում ավարտվել է չեթեների ժամանակաշրջանը, մաֆիայի ժամանակաշրջանը: Անվերադարձ փակվել է խունտայի ժամանակաշրջանը: Ֆինանսաբանկային շրջանակների լոբբին տարիներ շարունակ շահագործել է իմ ժողովրդի քրտինքը: Այսուհետեւ չեն շահագործի: Շատ երկար ենք հանդուրժել: Բոլորին եմ ասում. «Դուք որ մեր դեմ այս պայքարն եք ձեռնարկել, դրա համար շատ ծանր գին եք վճարելու»: Առանց ամաչելու Ստամբուլի բորսան փլուզելու ջանքեր են գործադրում: Փլուզում ես՝ փլուզիր, Թայիփ Էրդողանը բորսայում բաժնետոմսեր չունի: Եթե փլուզես՝ փլատակների տակ ինքդ կմնաս»:

Օդանավակայանից Էրդողանը շարժվեց Անկարա, առաջին կանգառը Փուրսաքլար արվարձանն էր, որտեղ ասաց. «Երկրի վարչապետին հայհոյողներն ունեն աջակիցներ: Մենք նորից կհամբերենք, բայց համբերությունը սահման ունի: Ամոթ նրանց՝ ֆինանսական շրջանակներից են, թե արվեստագետ: Բարձրացել են Աթաթուրքի անվան պալատի տանիքը, թե չենք թողնի քանդել: Ձեր ուժը չի պատի: Քանդելու ենք: Ինչո՞ւ: Օպերայի թատրոն կառուցելու համար: Թուրքիան դա չունի: Եթե շատ են ուզում, որ Աթաթուրքի պալատի տեղը այգի լինի, ապա այգի կկառուցենք: Բայց մեզ չեն կարող հետքայլ պարտադրել»:

Վարչապետ Էրդողանը մոտավորապես նույն բանն ասաց Անկարայի մյուս երկու արվարձաններում: Պարզապես օդանավակայանը Անկարայի կենտրոնից 35 կմ հեռավորության վրա է, եւ նա այս ճանապարհը անցավ 4 ժամում:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

---

ՍԻՐԻԱ

# Ասադն ուզում է Գոլանը հենակետ դարձնել ընդդեմ Իսրայելի

## Իսլամիստները գնդակահարել են 15-ամյա դեռահասի



Սիրիայի նախագահ Բաշար Ասադը լիբանանյան «Ալ Աքբար» թերթին տված հարցազրույցում հայտարարել է, որ երկրի ղեկավարությունը լրջորեն մտադրվել է Գոլանի բարձունքները որպես հենակետ օգտագործել Իսրայելի դեմ ռազմական գործողությունների համար: Նրա խոսքերով, խոսքը երկարատեւ ռազմարշավի մասին է, որի ընթացքում սիրիացիները մտադիր չեն նախաձեռնությունը ձեռքից բաց թողնել:

Ասադն ավելացրել է, որ Իսրայելը աջակցում է «օրինական իշխանության դեմ հանդես եկող ահաբեկչական խմբավորումներին»: Նա վստահություն է հայտնել, որ դա իսրայելցիների ռազմավարական լուրջ վրիպումն է: Ասադը հայտարարել է, որ սիրիական բանակը կոշտ հակահարված տվեց Սիրիայի տարածք թափանցելու իսրայելական բանակի փորձերին:

Նախագահը նաեւ երախտիքի խոսք է ասել Ռուսաստանին: «Ռուսաստանյան մի ընկերություն մեր ափերի մոտակայքում հանքավայրեր մշակելու պայմանագիր է ստորագրել: Մենք վստահ ենք, որ Ռուսաստանը չի կորցնի իր դիրքերը Սիրիայում: Մոսկվան պաշտպանում է իր ռազմավարական եւ ազգային շահերը՝ մեզ ոչ թե պարտադրելով իր դիրքորոշումը, այլ օժանդակելով հակամարտության հաղթահարմանը», ասել է նա:

«Արեւմուտքի եւ նրա դաշնակիցների ստոր խաղը մոտենում է անփառունակ վախճանին: Նրանք բոլորը փորձում են մեզ կաշառել, որպեսզի վերահսկողություն ապահովեն մեր երկրի հարստությունների նկատմամբ եւ մասնակցեն երկրի վերականգնմանը», ընդգծել է Ասադը:

Ինչ վերաբերում է Սիրիայի անցուդարձին, «Մարդու իրավունքների պահպանումը վերահսկող սիրիական խումբը» Ֆրանսպրեսի թղթակցին հայտնել է, որ Հալեպում ապստամբների իսլամիստական խմբավորումներից մեկի գրոհայինները հենց ծնողների աչքի առջեւ գնդակահարել են 15-ամյա մի դեռահասի: Իսլամիստները նրան մեղադրել էին աստվածանարգության մեջ:

Որոշ տեղեկությունների համաձայն, մահապատիժը ի կատար են ածել կրոնական ծայրահեղականություն քարոզող եւ «Ալ Ղաիդայի» հետ կապված «Ան Նուսրա ճակատի» գրոհայինները: Նրանց զոհը 15-ամյա Մուհամմեդ Կատաան է, որը սուրճ էր վաճառում Հալեպի շրջաններից մեկում: Մի քանի օր առաջ նա փողոցային վեճի ժամանակ իբր ասել էր. «Նույնիսկ եթե Մուհամմեդ մարգարեն իջնի երկիր, միեւնույն է՝ ես հավատացյալ չեմ դառնա»:

«Մարդու իրավունքների պահպանումը վերահսկող սիրիական խումբը» այդ միջադեպի կապակցությամբ նշում է, որ իսլամիստների նմանօրինակ գործողությունների պատճառով «Սիրիայի բնակչությունը կվախենա Բաշար Ասադի վարչակարգի տապալման հեռանկարից»:

Պ.Ք.

---

# «Վաշինգտոն փոստի» եւ «Գարդիանի» իրազեկիչը ԿՀՎ նախկին աշխատակից Է. Սնոուդենն է

## Համատարած լրտեսումը մտահոգել է նույնիսկ սենատորներին

Ամերիկյան «Վաշինգտոն փոստ» եւ բրիտանական «Գարդիան» օրաթերթերը հրապարակել են այն անձի անունը, ումից իրենք տեղեկություններ էին ստացել ամերիկյան հատուկ ծառայությունների ծավալած համացանցային եւ հեռախոսային լրտեսման վերաբերյալ: Պարզվում է, որ երկու թերթերի իրազեկիչը ԿՀՎ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենն է: Նրա խոսքերով, ինքը ստիպված հրապարակել է գաղտնի փաստաթղթեր՝ ի պատասխան ԱՄՆ կառավարության կողմից քաղաքացիական իրավունքների, այդ թվում անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի կոպիտ խախտման: Համատարած լրտեսման թեմային «Ազգը» եւս անդրադարձել է հունիսի 7-ի եւ 8-ի համարներում:

Հիշյալ երկու օրաթերթերի հրապարակումները բուռն վիճաբանություններ են հարուցել ԱՄՆ Կոնգրեսում, իսկ Էդվարդ Սնոուդենի անվան գաղտնազերծումից հետո նրան սպառնում է քրեական հետապնդում, ուստի նա մտադրվել է քաղաքական ապաստան խնդրել որեւէ երկրում:

ԿՀՎ նախկին տեխնիկական մասնագետ, 29-ամյա Էդվարդ Սնոուդենը ներկայումս ապրում է Հոնկոնգում: Նա «Վաշինգտոն փոստի» թղթակցին պատմել է, որ ՁԼՄ-ների միջոցով ամերիկյան գաղտնի ծառայությանը մերկացնելու որոշումը իր մեջ հասունացել է աստիճանաբար: Կշեռքի մի նժարի վրա պետանվտանգության շահերն են, մյուսի վրա՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, որը երաշխավորված է սահմանադրությամբ: Ծրագրավորողն ասում է, որ ամեն ոք նման ընտրություն պետք է կատարի իր համար:



«Ձեզ կարող են գաղտնալսել եւ ձայնագրել, եթե նույնիսկ որեւէ վատ բան չեք արել: Նման տեղեկություններ պարունակող սերվերները տարեցտարի շատանում են: Ոչինչ մի՛ արեք, միայն հայտնվեք նրանց տեսադաշտում, եւ դա բավական է: Գաղտնալսման պատճառ կարող է դառնալ սխալ հավաքված հեռախոսահամարը. դա արդեն գործի է դնում համակարգը: Այդ պահից նրանք կարող են ծայրեծայր ուսումնասիրել ձեզ, ձեր յուրաքանչյուր որոշումը, յուրաքանչյուր քայլը», պատմում է Սնոուդենը:

Ազգային անվտանգության գործակալության տնօրեն Ջեյմս Կլեպպերը հստակ հայտարարությամբ խոստովանել է, որ «Վաշինգտոն փոստի» նշած լրտեսման PRISM ծրագիրը իրոք գոյություն ունի, սակայն գործել է «օրինական հիմունքներով» եւ Կոնգրեսի թույլտվությամբ: Բացի դրանից, Կլեպպերը պնդել է, թե տվյալներ են հավաքվում իբր ոչ թե ԱՄՆ քաղաքացիների, այլ միայն ԱՄՆ-ից դուրս գտնվող օտարերկրացիների վերաբերյալ:

Գաղտնի տեղեկությունների արտահոսքը որոշակի վտանգ է պարունակում: Եվ Wikileaks-ի իրազեկիչ, ներկայումս դատվող զինծառայող Մեննինգի ճակատագիրը չկրկնելու համար Սնոուդենը մտադիր է քաղաքական ապաստան խնդրել այնպիսի երկրում, որը, նրա խոսքերով, դեռ պաշտպանում է խոսքի ազատությունը եւ մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը: Սնոուդենը նաեւ կարծում է, որ իր հրապարակած լրտեսման գաղտնի ծրագրերի հանրային լայն քննարկման առարկա կդառնան: Բացի դրանից, ինքը հույս ունի, որ մարդիկ այսուհետեւ կկարողանան դատական կարգով պաշտպանել մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը:

Ի դեպ, գաղտնի փաստաթղթերի հրապարակումից հետո ԱՄՆ-ում պայթած սկանդալը ընդգրկում է նորանոր ոլորտներ: Մասնավորապես Սենատի անդամները սկսել են մտահոգվել, թե արդյոք իրենց հեռախոսազրույցները եւս չե՞ն գաղտնալսվում:

Ըստ էության, Սնոուդենը հասարակայնության ուշադրությունը բեւեռել է արդեն վաղուց գոյություն ունեցող խնդրի վրա: Խոսքը CALEA ծրագրի մասին է, որով ՀԴԲ-ն զբաղվում է 1998 թվականից: Սենատում դրան քաջատեղյակ են: Արդեն 90-ականների վերջերին ընդունվեց օրենք, ըստ որի հեռահաղորդակցական ծառայությունների մատակարարները պետք է աջակցեն իրավապահ մարմիններին: Փաստաթուղթը պարտավորեցնում է ՀԴԲ պահանջով տրամադրել հեռախոսազրույցների ձայնագրություններ, էլեկտրոնային հաղորդումներ, բջջային հեռախոսի տիրոջ գտնվելու վայրի տվյալներ:

Պ.Ք.

# Հայաստանը՝ Կաննում

Արդեն հինգերորդ տարին է, ինչ հայ ռեժիսորներն ու պրոդյուսերները հնարավորություն են ունենում իրենց նախաձեռնությունները, կինոնախագծերը, նոր կինոառաջարկները, նաեւ արտադրական եւ հետարտադրական փուլերում գտնվող ֆիլմերը Հայաստանի ազգային կինոկենտրոնի նախաձեռնությամբ ներկայացնել Կաննի փառատոնում գործող տասնօրյա կինոշուկայում, որտեղ Հայաստանն ունի մշտական տաղավար:






«Կաննի կինոշուկայի հայկական տաղավարում կայացան հայ ռեժիսորների ֆիլմերի եւ կինոնախագծերի շնորհանդեսներ, ինչպիսիք են՝ Ջիվան Ավետիսյանի «Թեւանիկ»-ը, Մարիա Սահակյանի եւ Ջեֆ Գալուստյանի «Ֆլորիստը» հեքիաթ-նախագիծը, Ռուբեն Քոչարի «Իմ անունը Վիոլա է» եւ այլ նախագծեր», «**Ազգ**»-ի հետ զրույցում տեղեկացրեց Ազգային կինոկենտրոնի տնօրեն Գեւորգ Գեւորգյանը:

Ինչպես կինոկենտրոնի տնօրենը փաստեց, կինոշուկայի օրերին առանձին աշխատանքներ են տարվում մի շարք կարեւոր միջազգային նշանակության կինոկազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ, բացի հայկական կինոնախագծերից, ֆիլմերից եւ ծրագրերից:

Ի դեպ, ազգային կինոկենտրոնի տնօրենը նաեւ հանդիպումներ է ունեցել Յուրիմաժի, Եվրոպական աուդիովիզուալ օբսերվատորիայի, Ֆրանսիայի ազգային կինոկենտրոնի ներկայացուցիչների հետ: Աուդիովիզուալ օբսերվատորիային այժմ անդամակցում է 40 երկիր: Ըստ նախնական պայմանավորվածության, 2014թ. Հայաստանը պատրաստվում է անդամակցել Յուրիմաժին, տեղեկացրեց կինոկենտրոնի տնօրենը:

Գ. Գեւորգյանն ուրախությամբ նշեց նաեւ, որ «Համաշխարհային կինոֆոնդի» տնօրեն Դուգլաս Լայբլի հետ քննվել է «Սայաթ-Նովա» ֆիլմի վերականգնման աշխատանքների ընթացքի մասին, ապա նաեւ՝ վերականգնումից հետո ֆիլմը 2014թ. Կաննի կինոփառատոնում որպես համաշխարհային ճանաչում ունեցող լավագույն ֆիլմ ցուցադրելու հարցը:

Պլաններ կան նաեւ Հայաստանի եւ Ֆրանսիայի ազգային կինոկենտրոնների միջեւ վերակնքել համագործակցության պայմանագրեր:

Հատկանշական է, որ Գ. Գեւորգյանը թուրքական «Հերսեյֆիլմ» կինոարտադրող ընկերության նախաձեռնությամբ հանդիպել է թուրքական կողմի հետ՝ հետագա համագործակցության նպատակով:

Ինչպես նշում է Գեւորգյանը, եղել են նաեւ մի շարք կարեւոր հանդիպումներ ռուսական Ռուսիկո ընկերության ներկայացուցիչների, Վենետիկի կինոփառատոնի կինոշուկայի տնօրեն Պասկալ Դիոտի, «Քենդի Մարշալ» ամերիկյան կինոընկերության ներկայացուցիչների հետ, որը հետաքրքրված է Հայաստանում կինո նկարահանելու գաղափարով:

Հայկական մի քանի կարճամետրաժ ֆիլմեր ներկայացվել են նաեւ կարճամետրաժ ֆիլմերի արտամրցութային ծրագրում:

**ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ**

# Մեկնարկել է Ա. Խաչատրյանի մրցույթի երկրորդ փուլը



Մեկնարկել է Ա. Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի 2-րդ փուլը: Ի դեպ, առաջին փուլը հաղթահարել են 9 թավջութակահարներ Կոտսիոլիս Գիորգոս (Հունաստան), Լոմակով Գեորգի (Ուկրաինա), Նավասարդյան Միքայել (Հայաստան), Իոնիցա Անդրեյ (Ռումինիա), Պերլովա Ալեքսանդրա (Ռուսաստան), Մորոզովա Աննա (Ռուսաստան), Խաչատրյան Գայանե (Հայաստան), Սուշենկո Ելիզավետա (Ռուսաստան), Աթայան Հակոբ (Հայաստան):

Մրցույթն անցկացվում է երեք փուլով: Երկրորդ փուլի հաղթողների անունները պարզ կդառնան հունիսի 11-ին: Իսկ մրցույթի եզրափակիչ երրորդ փուլը տեղի կունենա հունիսի 13-ին Արամ Խաչատրյան համերգասրահում, իսկ արդեն հունիսի 14-ին կանցկացվի գալա համերգը, տեղի կունենա մրցանակաբաշխություն:

Արամ Խաչատրյանի անվան 9-րդ միջազգային մրցույթի ժյուրիի նախագահ Արամ Թալալյանը նշում է, որ բոլոր մասնակիցներն էլ լավ պատրաստված են, եւ թեժ պայքար է ընթանում մրցանակային տեղերի համար:

Մրցույթի երկրորդ փուլ անցած թավջութակահար, Հունաստանը ներկայացնող Գիորգոս Կոտսիոլիսը տեղեկացրեց, որ սա իր երկրորդ մրցույթն է, թավջութակ նվագում է 6 տարեկանից, մի քանի ամիս է պատրաստվում է մրցույթին եւ հույս ունի իր բոլոր ելույթները հաջող կանցնեն:

Այս տարի մրցույթն ուղղված է տաղանդավոր թավջութակահարների բացահայտմանը:

Նշենք, որ Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթի կազմակերպիչներն են ՀՀ մշակույթի նախարարությունը, «Արամ Խաչատրյան» մշակութային հիմնադրամը եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Մրցույթն անցկացվում է ՀՀ նախագահի տիկին Ռիտա Սարգսյանի հովանու ներքո:

2010 թվականից մրցույթի գլխավոր գործընկերն է ԱՊՀ անդամ երկրների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամը:

**ԱՄՄԱՆ**

# Դոկտ. Արտա Ճեմեճեանի շահեկան դասախօսութիւնը

Դոկտ. Արտա Ճեմեճեան, Յորդանանի մէջ ունեցած բանախօսական իր անդրանիկ ելոյթով (ԱՄՄ-ի ընդարձակ սրահին մէջ), ցուցաբերեց իր համակրանքը հանդէպ յորդանանահայ մտաւորական տարրին, եւ, անշուշտ, հմայեց ու հետեւաբար նաեւ սիրուեցաւ՝ իր մատուցած մեծապէս շահեկան նիւթով, որն էր «Հայերէն լեզուի պահպանման մարտահրաւէրները Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի սեմին», հարց մը, որ մեծապէս կը յուզէ ու կը մտահոգէ ամբողջ հայութիւնը:



Դոկտ. Արտան, լեզուաբանի իր հմտութեամբ, հեղինակաւոր կերպով եզրակացուց, որ հայերէն լեզուն, իր Մեսրոպեան տառերով, պիտի պահուի եւ պիտի հանդիսանայ հայապահպանման մեր ճիգերուն, ինչպէս նաեւ մեր անկախ պետականութեան եւ մեր համայն ժողովուրդին զարգացման առաջնորդն ու ուղեցոյցը: Իր ելոյթին ընդմէջէն յարգելի դասախօսը քննարկեց բազմաթիւ տարբերակները շատ ու շատ միջոցներու եւ հետապնդման մեթոդներու, հիմնաւորելու համար, որ հայերէն լեզուի պահպանումը կը հանդիսանայ ազգային մեր գոյատեւման գլխաւոր գրաւականը: Պրոֆ. Արտայի բանախօսութիւնը կը բովանդակէր մանկավարժական եւ ճարտարագիտական դասաւորութիւններն ու պահանջքները բաւարարող բոլոր գործօնները:

Նիւթը շատ հետաքրքրական էր, շահեկան, գրաւիչ եւ ունկնդիրներուն համար շատ հաղորդական ու հրապուրիչ: Բանախօսուհին բացայայտեց անցեալի եւ ներկայի լեզուապահպանման տարբերութիւնները, եւ տուաւ իր խորհուրդներն ու ներկայացուց մեթոդները հայերէն լեզուի պահպանման մարտահրաւէրներուն մասին: Յոյժ կարեւոր այս ձեռնարկը կը վայելէր նախագահութիւնը յորդանանահայ գաղութի հոգեւոր առաջնորդ Վահան արք. Թոփալեանի:

Երեկոյի բացման խօսքով հանդէս եկաւ ԱՄՄ-ի Մշակութային յանձնախումբի անդամ ընկերուհի Մարալ Վարդանեանը, որ ողջունեց ազնիւ բանախօսը, յատկապէս իր ունեցած ազգանուէր ներդրումին համար, տուաւ անոր հակիրճ կենսագրականը եւ նշեց անոր յաջողութիւնները աշխատանքային իր ասպարէզներէն ներս: Բանախօսութեան աւարտին փակման խօսքով հանդէս եկաւ ՌԱԿ Յորդանանի Շրջանային վարչութեան ատենապետ ընկեր Ներսէս Ներսէսեանը, որ բնութագրեց բանախօսութեան նիւթը իբրեւ խիստ այժմէական ու կենսական, իսկ զեկուցաբերը բնութագրեց որպէս «ազգային զմայլանքի» արժանի: Ընկեր Ներսէսեան նաեւ շնորհակալութիւն յայտնեց տէր եւ տիկին Ճեմեճեաններուն, յատկապէս իրենց տուած այն խոստումին համար, թէ շուտով կրկին պիտի այցելեն Ամման-Յորդանան, եւ աշխատանքային սեղաններով պիտի նպաստեն գաղութիս խրախուսիչ տարր հանդիսացող եւ շօշափելի թիւով հայերէն լեզուի ծարաւ զգացող երիտասարդ-երիտասարդուհիներուն, որոնք իրենց հարցադրումներով մեծ տպաւորութիւն թողուցին բանախօսուհիին վրայ:

**ՄԱՐԱԼ ՆԵՐՍԷՍԵԱՆ**
**Ամման, Յորդանան**

# Նոր հրատարակություն. «Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը»

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել դոկտոր Կարեն Մաթեւոսյանի «Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը» աշխատությունը:

Գրքում ներկայացվում է Վանա լճի Աղթամար կղզին՝ իր պատմության կարեւոր դրվագներով եւ մշակութային հարուստ ժառանգությամբ, որի բաղկացուցիչներն են Գագիկ Արծրունի թագավորի կառուցած, մեծարվեստ պատկերաքանդակներով զարդարված Սուրբ Խաչ եկեղեցին, կղզու մյուս եկեղեցիներն ու կառույցները, աղթամարյան հարյուրից ավելի ձեռագրերը եւ մշակութային այլ արժեքներ:

Կարեն Մաթեւոսյանի «Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը» գիրքը նախատեսված է հայոց պատմությամբ ու մշակույթով զբաղվող մասնագետների եւ ընթերցող լայն հասարակայնության համար: Պատկերազարդ գրքում օգտագործվել են Հրայր Բազեի, Սաթենիկ Մելքոնյանի լուսանկարները, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տրամադրած մանրանկարների լուսապատճենները:

Աշխատությունը տպագրվել է Մայր աթոռ Ս. Էջմիածնի բարերար Գաբրիել Չեմբերճյանի մեկենասությամբ:

# «Շուշի» համույթը շարունակում է հիացնել

«Շուշի» պարային համույթի հաջողության գաղտնիքն այն է, որ Սեդա Քանտարճյանը ոչ թե հարկադրաբար, այլ իր իսկ ցանկությամբ, սիրով է ստեղծել, հիմնել այդ խումբը», գրում է Նյու Ջերսիի Հայկական ռադիոժամի հաղորդումների տնօրեն Վարդան Աբդոն Նյու Յորք-Նյու Ջերսիում գործող պարախմբի մասին՝ ավելացնելով, որ երեխաները սիրով ու հպարտությամբ են բեմ բարձրանում կատարելու հայկական ավանդական եւ ժամանակակից պարեր:

Խմբի նորագույն ելույթը տեղի է ունեցել, ըստ ստացված հաղորդագրության, մայիսի 18-ին Սբ Լեւոն հայկական եկեղեցու Աբաջյան դահլիճում եւ դարձյալ արձանագրել հաջողություն, որը ոգեւորել է մասնակիցներին, որոնք երդվել են շարունակել միասին աշխատել կանգուն պահելու համար «Շուշի» պարային համույթը:

**Հ. Ծ.**

# Մասամբ հեղինակությունը վերականգնելու վերջին հնարավորությունը

*Այսօր Կոպենհագենում կկայանա Դանիա-Հայաստան մրցախաղը*

2014-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի 6-րդ տուրում այսօր Հայաստանի ազգային հավաքականը Կոպենհագենում կմրցի Դանիայի ընտրանու հետ: ՀՀ հավաքականը երեկ առավոտյան «Բագրատ տուրի» կազմակերպած չարտերային չվերթով ուղեւորվեց Կոպենհագեն՝ հանգրվանելով «Հիլթոն» հյուրանոցում: Հավաքականի կազմում մրցավայր են մեկնել 23 ֆուտբոլիստներ: Երեկ Կոպենհագենի «Պարկեն» մարզադաշտում մեր ֆուտբոլիստներն իրենց միակ մարզումն անցկացրին, իսկ այսօր Երեւանի ժամանակով ժամը 22.15-ին կսկսվի հանդիպումը, որը կցուցադրվի «Արմենիա» հեռուստաընկերությամբ:




Մալթայի հավաքականից Երեւանում կրած խայտառակ պարտությունից հետո այսօր մեր ֆուտբոլիստներին առավել լուրջ փորձություն է սպասում: Մեր հավաքականն ընտրական մրցաշարում 4 անընդմեջ պարտություն է կրել ու հայտնվել է աղյուսակի ստորին հորիզոնականում: Պատահական չէ, որ դանիացիների հետ մրցավեճում բուքմեյքերները բացահայտ առավելություն են տալիս մրցակցին: Դանիայի հավաքականի հաղթանակի գործակիցը 1,28 է, մինչդեռ Հայաստանի հավաքականի հաղթանակի համար խաղադրույքներ են ընդունվում 8 գործակցով: Ոչ-ոքին գնահատվում է 4,5:

Ընտրական B խմբում Չեխիայի եւ Իտալիայի հավաքականների մրցավեճում դարպասները մնացին անառիկ: Իտալացիները խմբի բացահայտ առաջատարն են: Իսկ ահա դանիացիներին 2-րդ տեղի համար պայքարում այսօր հույժ կարեւոր է հաղթանակը:

Դանիայի հավաքականն ընտրական մրցաշարը սկսեց չեխերի հետ սեփական հարկի տակ գրանցված գոլազուրկ ոչ-ոքիով: Բուլղարացիների հետ մրցակցի հարկի տակ կայացած խաղում էլ գրանցվեց ոչ-ոքի՝ 1-1: 3-րդ խաղում դանիացիներն Իտալիայում պարտվեցին 1-3 հաշվով, իսկ հետո անպատասխանորեն Չեխիայում 3-0 հաշվով ջախջախեցին մրցակցին: Դա առայժմ Դանիայի հավաքականի միակ հաղթանակն է ընտրական մրցաշարում: Վերջին խաղը դանիացիները անցկացրել են մարտի 26-ին՝ սեփական հարկի տակ ոչ-ոքի (1-1) խաղալով բուլղարացիների հետ:

Հայաստանի եւ Դանիայի հավաքականները միմյանց հետ մրցել են 2 անգամ Եվրո-96-ի ընտրական մրցաշարում: Դանիայի հավաքականն այն ժամանակ Եվրոպայի գործող չեմպիոնն էր: Այդ տիտղոսը դանիացիները նվաճել էին 1992-ին Շվեդիայում կայացած Եվրոպայի առաջնությունում՝ եզրափակիչում 2-0 հաշվով հաղթելով աշխարհի չեմպիոն գերմանացիներին:

Երեւանում կայացած խաղում Հայաստանի հավաքականը պարտվեց 0-2 հաշվով, իսկ Դանիայում դաշտի տերերը հաղթեցին 3-1 հաշվով: Մեր հավաքականից գոլի հեղինակ դարձավ Արթուր Պետրոսյանը:

Կկարողանա՞ն արդյոք խայտառակությունից հետո ուշքի գալ մեր ֆուտբոլիստները, թե՞ ընտրական մրցաշարում, որն արդեն լիովին ձախողել են, Հայաստանի հավաքականը 5-րդ անընդմեջ պարտությունը կկրի: Այդ հարցի պատասխանը կտա այսօր կայանալիք հանդիպումը:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Իտալիա | 6 | 4 | 2 | 0 | 12-4 | 14 |
| 2. Բուլղարիա | 6 | 2 | 4 | 0 | 11-4 | 10 |
| 3. Չեխիա | 6 | 2 | 3 | 1 | 6-4 | 9 |
| 4. Դանիա | 5 | 1 | 3 | 1 | 6-5 | 6 |
| 5. Հայաստան | 5 | 1 | 0 | 4 | 2-8 | 3 |
| 6. Մալթա | 6 | 1 | 0 | 5 | 2-14 | 3 |

# «Ռոլան Գարոսի» դափնեկիրները հայտնի են

**Փարիզում վերջնագիծը հատեց թենիսի «Մեծ սաղավարտի» մրցանակի հերթական մրցաշարը՝ «Ռոլան Գարոսը»: Կանանց մրցապայքարում 11 տարվա ընդմիջումից հետո կրկին ուժեղագույնը ճանաչվեց ամերիկուհի Սերենա Ուիլյամսը, որը եզրափակիչում միեւնույն 6-4, 6-4 հաշվով պարտության մատնեց ռուսաստանցի Մարիա Շարապովային: Նշենք, որ Շարապովան «Ռոլան Գարոսի» նախորդ տարվա մրցաշարի հաղթողն էր, իսկ Սերենան Փարիզում վերջին անգամ հաջողության էր հասել 2002-ին: Հետաքրքրական է, որ անցյալ տարի Ուիլյամսը «Ռոլան Գարոսում» պայքարից դուրս էր մնացել առաջին փուլում:**

**Ուիլյամսը մեծ առավելություն ուներ Շարապովայի նկատմամբ՝ հաղթելով վերջին 12 մրցախաղերում: Իսկ Շարապովային վերջին անգամ հաջողվել էր Ուիլյամսին հաղթել 2004-ին:**

**Կանանց զուգախաղի եզրափակիչում գլխավոր մրցանակը վիճարկեցին իտալուհիներ Սառա Էրանին ու Ռոբերտա Վինչին, որոնց մրցակցուհիներն էին ռուսաստանցիներ Եկատերինա Մակարովան եւ Ելենա Վեսնինան: Հաջողությունն ուղեկցեց ռուսաստանյան զույգին, որը հաղթեց 7-5, 6-2 հաշվով: Հարկ է նշել, որ իտալական զույգն անցյալ տարվա մրցաշարի հաղթողն էր:**



**Իսպանացի Ռաֆայել Նադալը 8-րդ անգամ դարձավ «Ռոլան Գարոսի» հաղթող: Վճռորոշ մրցախաղում նա 6-3, 6-2, 6-3 հաշվով պարտության մատնեց իր հայրենակից Դավիթ Ֆեռերին: 2-րդ խաղափուլի ժամանակ մի քանի կիսամերկ ֆանատներ ջահերով ներխուժեցին կորտ եւ մրցախաղը ստիպված էին որոշ ժամանակով դադարեցնել:**

**Վերջին անգամ «Ռոլան Գարոսում» եզրափակիչում իսպանացի թենիսիստներ էին մրցել 2002-ին, երբ Ալբերտո Կոստան հաղթել էր Խուան-Կառլոս Ֆեռերոյին: Ռաֆայել Նադալն իրեն գերազանց է զգում հողածածկույթով կորտերում: Վերջին 9 տարիներին նա Փարիզում միայն 2009-ին է պարտվել՝ 4-րդ փուլում զիջելով շվեդ Ռոբին Սոդեռլինգին: Այդ տարի հաղթող դարձավ շվեյցարացի Ռոջեր Ֆեդեռերը, որը եզրափակիչում հաղթեց Սոդեռլինգին:**

**Տղամարդկանց զուգախաղում հաջողությունն ուղեկցեց Բոբ եւ Մայք Բրայան եղբայրներին, որոնք հաղթեցին ֆրանսիացիներ Միքայել Լլոդրային եւ Նիկոլյա Մայուին (6-4, 4-6, 7-6): Բրայան եղբայրները «Մեծ սաղավարտի» մրցաշարերում 14-րդ տիտղոսը նվաճեցին, ինչը յուրօրինակ ռեկորդ է:**

ՇԱԽՄԱՏ

# Տիգրան Պետրոսյանն արժանացավ գլխավոր մրցանակին

**Տիգրան Պետրոսյանը գերազանց հանդես եկավ Ալբենայում անցկացված շախմատի մրցաշարում: 9 հնարավորից վաստակելով 8 միավոր, Տիգրանը դարձավ մրցաշարի հաղթող՝ պարգեւատրվելով 5 հազար եվրոյով: Վերջին 3 տուրերում Պետրոսյանն իր օգտին 2,5 միավոր գրանցեց: 7-րդ տուրում ոչ-ոքի խաղալով Հրանտ Մելքումյանի հետ, ավարտական 2 տուրերում Տիգրանը հաղթեց Բորիս Չաթալբաշեւին եւ Լեւենտե Վայդային:**

**4 շախմատիստներ՝ Էմիլիան Պարլիգրասը, Հրանտ Մելքումյանը, Թամիր Տաբաշին եւ Վիտալի Բեռնադսկին վաստակեցին 7-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով Մելքումյանը գրավեց 3-րդ տեղն ու արժանացավ 2500 եվրոյի: Հրանտն ավարտական 2 տուրերում հաշտություն կնքեց Վլադիսլավ Նեւեդնիչնու եւ Էմիլիան Պարլիգրասի հետ:**

**Բրազիլահայ շախմատիստ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 6,5 միավորով գրավեց 10-րդ տեղը՝ պարգեւատրվելով 300 եվրոյով: Նա հաղթեց Դավիթ Պառավյանին ու Յակուպ Էրթուբանին, պարտվեց Լեւենտե Վայդային:**



**Ավետիք Գրիգորյանը 6 միավորով զբաղեցրեց 18-րդ հորիզոնականը: Նա 3 պարտիաներում էլ հաշտություն կնքեց Իվայլո Էնչեւի, Վիտալի Բեռնադսկու եւ Ալին Բերեսկուի հետ:**

**Ալբենայի մրցաշարից հետո Տիգրան Պետրոսյանը, Ավետիք Գրիգորյանն ու Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը կմասնակցեն Բուլղարիայում մեկնարկող մեկ այլ մրցաշարի:**

# Եվրոպայի 2 չեմպիոն Ռուսաստանի կազմում

Մինսկում ավարտված բռնցքամարտի Եվրոպայի առաջնությունում Հայաստանը ներկայացրած 7 բռնցքամարտիկներից միայն Արամ Ավագյանին (56 կգ) հաջողվեց մրցանակակիր դառնալ՝ նվաճելով բրոնզե մեդալ:

Գերազանց ելույթ ունեցան ռուսաստանցի բռնցքամարտիկները, որոնք նվաճեցին 5 ոսկե, 1 արծաթե եւ 3 բրոնզե մեդալ: Մինչեւ 49 կգ քաշային կարգում 2-րդ անգամ Եվրոպայի չեմպիոն հռչակվեց Դավիթ Հայրապետյանը, որը եզրափակիչում պարտության մատնեց իռլանդացի Պատրիկ Բառնեսին: Ոսկե մեդալի արժանացավ նաեւ Եվրոպայի առաջնություններում նորամուտը նշած Արմեն Զաքարյանը: Մինչեւ 64 կգ քաշային կարգում Արմենը հաղթեց մոլդովացի Դմիտրի Գալագոտին: ՌԴ հավաքականի կազմում բրոնզե մեդալի էր արժանացել Հովիկ Հովհաննիսյանը (52 կգ):

Բացի ռուսաստանցի 2 բռնցքամարտիկներից, եզրափակիչ էին դուրս եկել եւս 2 հայ մարզիկներ: Մինչեւ 60 կգ քաշային կարգում Բելառուսը ներկայացնող Վազգեն Սաֆարյանցը պարտվեց ուկրաինացի Պավլո Իշչենկոյին: Անհաջողության մատնվեց նաեւ մինչեւ 69 կգ քաշային կարգում հանդես եկած Արայիկ Մարությանը, որը ներկայացնում էր Գերմանիան: Նա պարտվեց ռուսաստանցի Ալեքսանդր Բեսպուտինին:

# Պորտուգալացիները շրջանցեցին ռուսներին

Ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի 6-րդ տուրի հանդիպումներից կենտրոնականը F խմբում կայացած Պորտուգալիա-Ռուսաստան խաղն էր: Պորտուգալացիներին հաջողվեց Պոստիգայի խփած միակ գոլի շնորհիվ անչափ կարեւոր հաղթանակ տոնել եւ 14 միավորով գլխավորել աղյուսակը՝ շրջանցելով 12 միավոր ունեցող ռուսներին: Սակայն վերջիններս 2 խաղ պակաս են անցկացրել: ՌԴ հավաքականն անդրանիկ պարտությունը կրեց: F խմբում կայացած մյուս խաղում Ադրբեջանի հավաքականը սեփական հարկի տակ ոչ-ոքի (1-1) ավարտեց հանդիպումը Լյուքսեմբուրգի հավաքականի հետ:

A խմբի առաջատարի դիրքն ամրապնդեց Բելգիայի ընտրանին՝ սեփական հարկի տակ 2-1 հաշվով պարտության մատնելով սերբերին: Բելգիայի ընտրանին 19 միավորով շարունակում է գլխավորել աղյուսակը: Իսկ ահա խորվաթները սեփական հարկի տակ անսպասելիորեն 0-1 հաշվով զիջեցին շոտլանդացիներին ու 16 միավորով 2-րդ տեղում են:

C խմբում ավստրիացիները 2-1 հաշվով հաղթելով շվեդներին, 11 միավորով տեղափոխվեցին 2-րդ հորիզոնական: Իռլանդացիներն էլ 3-0 հաշվով պարտության մատնելով Ֆարերներին, վաստակեցին 11 միավոր:

H խմբում անակնկալ էր հյուրընկալվելիս Չեռնոգորիայի նկատմամբ ուկրաինացիների տոնած խոշոր (4-0) հաշվով հաղթանակը: 6 խաղից վաստակած 11 միավորով Ուկրաինայի հավաքականը հանգրվանեց 3-րդ հորիզոնականում: Չնայած պարտությանը, Չեռնոգորիան 14 միավորով պահպանեց առաջատարի իր դիրքը: Նույն խմբում կայացած Մոլդովա-Լեհաստան խաղն ավարտվեց 1-1:

G խմբի առաջատար Բոսնիայի հավաքականը հյուրընկալվելիս 5-0 հաշվով ջախջախեց լատվիացիներին: Հույները մրցակցի հարկի տակ 1-0 հաշվով հաղթեցին լիտվացիներին, իսկ Լիխտենշտեյն-Սլովակիա խաղն ավարտվեց ոչ-ոքի՝ 1-1:

E խմբում հաջող են հանդես գալիս ալբանացիները, որոնք Նորվեգիայի հետ խաղն ավարտեցին ոչ-ոքի՝ 1-1: Ալբանիայի հավաքականը 10 միավորով 2-րդ տեղում է: Սլովենիան 4-2 հաշվով հաղթեց Իսլանդիային: I խմբում ֆինները պարտության մատնեցին Բելառուսի ընտրանուն:

*էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Խնդիրները մեզանում հիմնախնդիրներ են դառնում

## «Գիլիոտին» ծրագիրը, որը հայտարարվեց վերջին տարիներին, կարծես մոռացության է տրվել

Հայաստանյան իրականությունում տարօրինակությունները սպասվածից շատ են եւ շարունակում են ավելանալ: Հենց թեկուզ ռուսական գազի գնի վերանայման առումով գործընթացներն այնպիսի դրսեւորումներ են ստանում, որ նվազագույնը ցանկանում ես օգտագործել զավեշտալի հասկացությունը: Հանրային գործիչ մեկը հայտարարում է, թե գազի գինը որոշվում է Մոսկվայի Կրեմլում: Եղբայր, ձեր նշած տարածքում է գտնվում ՌԴ բարձրագույն իշխանությունը, որը եւ արտահայտում է երկրի բնակչության շահերն ու իր ընդերքի պահանջարկ վայելող ունեցածը ձեռնտու գնով վաճառում: Այլ գործընթացը հանցանշաններ է պարունակում: Այնպես որ որեւէ պատճառաբանություն պարունակող բացատրություն անհեթեթ է, քանզի մարդկությունը հիմնականում առաջնորդվում է շահի ու արդյունավետ գործելու սկզբունքով: Այստեղ անգամ հարազատությունն է երկրորդ պլան մղվում, որը մեր պարագայում փոխարինվում է ինչ-ինչ կարգավիճակի մասին հիշեցումներով:

Նվազագույնը հիմնավոր չէ մեր այն հայրենակիցների պահվածքը, որոնք, դեսպանատան առաջ հավաքվելով, պահանջում են չբարձրացնել գազի գինը: Միթե՞ նրանք իրենց ավագներից չեն լսել «բակլան իմն է, խաշած եմ ցանում» արտահայտությունը: Մեր կողմից ի՞նչ գնահատականի կարժանանան այն մոսկվացիները, որոնք ՀՀ դեսպանատնից պահանջեն իջեցնել մերոնց արտահանած կոնյակի կամ ծիրանի գինը, ինչ է թե դրանք գնելու հարցում իրենք դժվարությունների են հանդիպում:

Կամ. ինչո՞ւ են մեր աղն ու հանքային ջրերը, տեղում արտադրված անձեռոցիկն ու զուգարանի թուղթը, գարեջուրն ու հյութերը, շինարարական ցեմենտն ու ներկերը, ջերմոցներում աճեցրած լոլիկն ու վարունգը, մի խոսքով՝ Հայաստանի Հանրապետությունում ստեղծվածը ավելի թանկ գնահատվում, երբ համանման ապրանքներն այլ երկրներում ավելի մատչելի են: Հենց թեկուզ բարձր կենսամակարդակով ապրող Ավստրիայի համեմատ, ուր 1,5 լիտր հանքային ջուրը կարելի է գնել ՀՀ 120-130 դրամով, եռաշերտ որակյալ զուգարանաթուղթը՝ 100-110 դրամով, ցեմենտի 50-կիլոգրամանոց պարկը՝ 1700 դրամով, գարեջրի 0,5 լիտրը՝ 250-300 դրամով, 45 տոկոս յուղայնության պանիրը՝ 2200 դրամով, 1 կգ հացը՝ 380-400 դրամով: Այս ամենին հավելենք բանկային ցածր տոկոսադրույքները, արտոնությունների ընդարձակ համակարգը, բնապահպանական հոգածությունները եւ ՀՀ միջավայրը պարզ ու տեսանելի կդառնա:

Բարեկեցության առումով աշխարհի առաջատար երկրներից մեկը համարվող Ավստրիայի նախագահը, ըստ Գրացի առողջապահական համակարգում դիրք զբաղեցնող մեր հայրենակցուհու, իրենց հաստատություն այցելության եկել էր տրամվայով: Մայրաքաղաք Վիեննայից էլ երկրի երկրորդ քաղաք հասել էր գնացքով: Ընդմիջման ժամին մտել էր մերձակա սրճարաններից մեկը, թեթեւակի սնվել ու աննկատ հեռացել: Հայրենակցուհու պատմածին չհավատալու որեւէ պատճառ չունեմ, քանզի այդ օրերին ՌԴ հեռուստաալիքներից մեկով հեռարձակվեց Շվեյցարիայի նախագահի հարցազրույցը, ուր երկրի թիվ 1 պաշտոնյան նշեց, որ քաղաքամերձ իր բնակավայրից աշխատատեղ հասնում է հեծանվով, մոտ 1 ժամվա ընթացքում: Լրագրողի այն հարցին, թե առջեւից ու թիկունքից անվտանգության քանի աշխատողներ են իրեն ուղեկցում այդ ընթացքում, նախագահը քմծիծաղով հավաստեց, որ նման բան հնարավոր չէ: Եվ հարցը՝ արդյո՞ք հայաստանյան որոշակի իրողությունները, ասենք, գազի գնի փոփոխությունն ու մեզ անհասանելի նախագահական նշված տարօրինակությունները որեւէ կապ ունե՞ն, հնչում է ինքնաբերաբար:

Անշուշտ ունեն: Շվեյցարիայում 1 բնակչի հաշվով բյուջեից իրականացվող տարեկան ծախսը կազմում է 27 հազար դոլար, Ավստրիայում՝ 29 հազար դոլար, ՀՀ-ում՝ հազիվ 1000 դոլար: Վերահսկիչ պալատին հատուկ բծախնդրություն չենք ցուցաբերում նշելու մեր երկրի բյուջեի ծախսային ուղղությունները, սակայն քաղաքացու իրավունքով կարող ենք պնդել, որ մեզ ղեկավարող պետական կառույցներն ու դրանցում աշխատողներն իսկապես շատ են: Առանց այն էլ բազմաթիվ նախարարություններից յուրաքանչյուրին զուգահեռ պետական կոմիտեներ, ծառայություններ, վարչություններ ու տեսչություններ են գործում, նախարարները նվազագույնը 4-5 տեղակալներ ունեն, գումարած աշխատակազմերի ղեկավարները. նույն խնդիրներն են փորձում լուծել մի քանի նախարարությունների մի քանի վարչություններ ու տեսչություններ: Այս ամենից է նաեւ, որ, ասենք, կենսաթոշակը կամ աշխատավարձը 5-10 հազար դրամով բարձրացնելը գերխնդիր է դառնում: Նկատենք, որ խոսքը եվրոպական չափանիշներով 10-20 եվրոյի մասին է, որն այստեղ միջին մասնագետը ստանում է 1 ժամվա աշխատանքի դիմաց: Այդ մարդիկ մեծ ու փոքր բնակավայրերում են, նրանց գործունեությունը ծավալվում է տասնյակ երկրներում: Հումքի ու թափոնների տեսակավորման գործարաններ կառուցող ավստրիական ընկերություններից մեկը, որտեղ աշխատում է մեր հայրենակից ճարտարագետը գյուղաքաղաք հիշեցնող բնակավայրում է: Ավելորդ չեմ համարում հիշել Շվեյցարիայի նախագահի հեռուստահարցազրույցի ժամանակ լրագրողին ուղղած այն խոսքերը, թե ձեզ աշխատավայր կամ տուն բարձրացնող գերարագ վերելակը հնարավոր է, որ մեր գյուղում գործող ընկերության տեղադրածը լինի: Այս առումով ինչքանով են արժանահավաս մեր պաշտոնյաների փոքր ու միջին գործարարությունը խթանելու վերաբերյալ հայտարարությունները, որոնք այդպես էլ իրականություն չեն դառնում: Իսկ կարծես բավական է, որ մարդ միջին չափով վարձատրվող գործ ունենա եւ նման թանկացումը նման ցավով չի ընդունի, որպիսին արձանագրվում է ՀՀ-ում, հանգեցնում երկրից արտագաղթի:

Մերօրյա Հայաստանում անշուշտ հնարավոր չէ ոչ շվեյցարական ժամացույց արտադրել եւ ոչ էլ ավստրիական ավտոբուսներում օգտագործվող «բիոէներգիա» որակվող վառելիքը ստանալ, թեեւ թե՛ մեկում, թե՛ մյուսում մեր հայրենակիցների մասնակցությունը կա: Տարբերությունն այն է, որ մեզանում առկա է հսկայաքանակ պետական համակարգ ու ապարատ, անհարկի մամլիչ հիշեցնող մի կառույց, որն իր ծանրությամբ հարմարավետ տեղավորվել է գործարար միջավայրին անհրաժեշտ տարածքում: Ցավոք, սա չէ այն գործելաոճը, որով կարելի է դիմագրավել ժամանակի ընթացքում առաջացող խնդիրներին, որոնք մեզանում գնալով հիմնախնդիրներ են դառնում:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**

**Ավստրիա, Գրաց**

ՌՈԲՈՏԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

# Հնդիկները պատրաստում են մարտական ռոբոտների բանակ



**Հնդիկ գիտնականները կարծում են, որ ապագայում ռազմական գործողությունները տեղի կունենան խելացի մեքենաների մասնակցությամբ՝ առանց մարդու միջամտության: «Թայմս օֆ Ինդիա» թերթը հաղորդում է, որ տեղացի ճարտարագետները մտավոր բարձր գործակից ունեցող մարտամեքենաների բանակի ստեղծման աշխատանքներ են սկսել: Այդ ռոբոտները կգործեն Հնդկաստանի անհանգիստ շրջաններում:**

**Խոսքը մասնավորապես Ջամուի ու Քաշմիրի նահանգի վերահսկման գծի մասին է, որը բաժանում է հնդկական եւ պակիստանյան բանակները, գիտնականները կարծում են, որ նորագույն մարտական մեքենաները յուրայիններին կտարբերեն օտարներից: Նման ռոբոտների ստեղծմամբ զբաղվում է Հնդկաստանի պաշտպանական հետազոտությունների ու մշակումների կազմակերպությունը (DRDO):**

**«Հնդկական շատ լաբորատորիաներ ներկայումս մշակում են ռոբոտ-զինվորների արտադրությունը: Կարծում ենք՝ մոտ ապագայում ծովային եւ ցամաքային պատերազմները կվարվեն առանց մարդկանց մասնակցության», ասում է DRDO-ի ղեկավար Այնաշ Չանդերը, որը նաեւ մեծ հեռահարության «Ագնի» հրթիռների առաջատար նախագծողն է:**

**Չանդերի խոսքերով, ռոբոտները սկզբնական շրջանում պարզապես կօգնեն զինվորականներին, բայց աստիճանաբար կընդլայնեն իրենց գործառույթները:**

**Նաեւ հաղորդվում է, որ Մեծ Բրիտանիայում ավելի հեռուն են նայում: Այնտեղ ստեղծվել է հատուկ կոմիտե, որը մշակում է մեքենաների հնարավոր ապստամբությունը կանխելու ծրագիր:**

**Պ. Ք.**

# Դասընթաց Վիվասելի գրասենյակում



**Հունիսի 6-ին եւ 7-ին ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխամասային գրասենյակում Երեւանում եւ մարզերում գործող բուհերի տեխնիկական ֆակուլտետների ուսանողների համար կազմակերպվել էր երկօրյա դասընթաց՝ ռադիոհասանելիության ցանցին, շարժական փոխկապակցման կենտրոնին եւ համակարգին, ինչպես նաեւ բջջային հեռահաղորդակցության համակարգի այլ առանցքային կոմպոնենտների վերաբերող թեմաներով: Բացի դրանից՝ ուսանողները հնարավորություն են ստացել ականատես դառնալու կայանների շահագործման, ինչպես նաեւ տեխնիկական ապահովման առօրյային: Դասընթացը վարել են ընկերության տեխնիկական վարչությունների մասնագետները:**


*Հավ»լված*
*ՀՀ հատուկ քննչական ծառայության պ»տի*
*«07» հունիսի, 2013թ. թիվ 11-Լ հրամանի*
*Վ.Գ.Շահինյան*

**ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ**

**ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարեւոր գործերի քննիչի թափուր պաշտոնի համար**

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

***ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարեւոր գործերի քննիչի երեք թափուր պաշտոնի համար անցկացվող բաց մրցույթի մասին***

**Պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների վերաբերյալ ներկայացվող պահանջները.**

1. Հատուկ քննչական ծառայությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան օտարերկրյա պետությունում ձեռք բերած, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության 60 տարին չլրացած այն քաղաքացին, ով՝

ա) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ պահեստազորի սպա է,

բ) տիրապետում է գրական հայերենին:

2. Չունի Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. փետրվարի 13 թիվ 143-Ն որոշմամբ հաստատված ցանկով հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատներն եւ հիվանդությունները:

3. Հատուկ քննչական ծառայության պաշտոնի կարող են նշանակվել նաեւ 1-ին մասի «ա» ենթակետի պահանջներին չհամապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ 13-րդ հոդվածի համաձայն՝ մինչեւ 27 տարին լրանալը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած եւ պահեստազորում հաշվառված անձինք:

4. Հատուկ քննչական ծառայությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝

ա) մինչեւ նշանակումը չունի դատախազի կամ քննիչի առնվազն 3 տարվա ստաժ,

բ) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

գ) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից,

դ) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից,

ե) գտնվում է քրեական հետապնդման մեջ,

զ) չի համապատասխանում 1-ին կետով սահմանված պահանջներին:

5. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարեւոր գործերի քննիչի թափուր պաշտոնը համալրելու համար ներկայացվող փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետին.

բ) անձը հաստատող փաստաթուղթ եւ պատճենը,

գ) բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ եւ պատճենը,

դ) աշխատանքային գրքույկ եւ պատճենը կամ քաղվածք,

ե) «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելը կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ եւ պատճենը (եթե հավակնորդը արական սեռի է),

զ) Տեղեկանք՝ քննիչի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների եւ հիվանդությունների բացակայության մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. փետրվարի 13 թիվ 143-Ն որոշման,

է) հայտարարություն՝ դատապարտված կամ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելու մասին,

ը) երկու լուսանկար՝ 3x4 չափսի:

Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

***Մրցույթն անցկացվում է հարցազրույցի եղանակով, որն իրականացվում է հատուկ քննչական ծառայության պետի կողմից հաստատված՝ ծառայության ծառայողների ատեստավորման ծրագիր-հարցաշարի հիման վրա /www.investigatory.am/:***

***Մրցույթն անցկացվելու է 2013թ. հուլիսի 12-ին՝ ժամը 11:00-ին,***

***Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ է համարվում 2013թ. հուլիսի 4-ը:***

***ՀՀ գլխավոր դատախազության շենքում՝ /Վ.Սարգսյան 5/,***

***ՀՀ հատուկ քննչական ծառայություն (5-րդ հարկ):***

***Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի անձնակազմի բաժինը /հեռ. 511-684, 511-662 /:***



Սույն թվականի Հուլիսի 11-ին, ժամը 09:00-ին ՀՀ Վայոց Ձորի մարզի Գնդեվազ համայնքի գյուղապետարանում տեղի կունենա Գեոթիմ ՓԲԸ-ի կողմից ներկայացված Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքաքարից կույտային տարրալվացման եղանակով ոսկու կորզման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Ծրագրի փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Գեոթիմ ՓԲԸ-ի կայք էջում՝www.geoteam.am:



Երեւանի «Ադամանդ» ապրանքա-հումքային բորսայի հարթակում (հասցե՝ք.Երեւան, Ազատամարտիկների փ. 6/1, 5-րդ հարկ) 2013թ.-ի հունիսի 14-ից՝ յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 11.00-17.00 իրականացվելու են ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի եւ Էլեկտրոնիկայի Ինստիտուտ ՊՈԱԿ-ի օգտագործված սարքերի եւ սարքավորումների (173 անվանում) հրապարակային սակարկությունները (աճուրդային վաճառքը):

Գույքի վաճառքը իրականացվում է համալիր՝որպես մեկ ամբողջական միավոր:

Գույքի ընդհանուր սկզբնական գինը կազմում է 3334400 դրամ:

Գույքը գտնվում է Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի տարածքում:

Գույքի ամբողջ ցուցակին հնարավոր է ծանոթանալ բորսայում:

Տեղեկությունների համար զանգահարել (010)56-31-15 կամ դիմել Բորսա:


ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 10.6.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: